



*«ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԵՒ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ» (PURE-WATER)
ԾՐԱԳԻՐ*

*ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏՈՒՄ
ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ*

*Երևան
25 օգոստոս, 2017*



Համագործակցության պայմանագիր՝ AID-111-A-17-00005

Ծրագրի անվանումը՝ «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում»

Ֆինանսավորող՝ Ամերիկայի միացյալ նահանգների Միջազգային զարգացման գործակալություն (ԱՄՆ ՄԶԳ)

Ծրագրի իրականացնող՝ «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ, «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ, ԵՂՀ Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոն



Սույն փաստաթուղթը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները/կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:



Բովանդակություն

.....	0
Հապավումներ	4
ՄԱՍ 1. Արարատյան դաշտում տնային տնտեսությունների հետազոտության արդյունքները	5
1.1 Ներածություն	5
1.2 Ամփոփագիր.....	8
1.3 Հետազոտության արդյունքները	9
1.3.1 Խմելու ջուր	9
1.3.2 Ոռոգման ջուր	14
1.4 Համայնքում խմելու և ոռոգման ջրերի հետ կապված խնդիրների վերաբերյալ իրազեկվածություն.....	17
1.5 Քաղաքացիական ակտիվություն. բնակիչների մասնակցությունը ջրի հետ առընչվող որոշումների կայացմանը և վերահսկմանը.....	24
Աղյուսակ 12. Բնակիչների գիտելիքներն ու մասնակցությունը ջրային ռեսուրսների կառավար- ման, ջրօգտագործման, ջրի որակի/հասանելիության կամ ջրավազանային պլանավորման գործընթացներին	26
1.6 ՏՏ-ների սոցիալ-տնտեսական կարգավիճակն ու ժողովրդագրական բնութագիրը.....	28
1.7 Ամփոփում.....	31
1.8 Առաջարկություններ	33
Մաս 2. Ջրային ոլորտի շահառուների և փորձագետների շրջանում անցկացված խորին հարցազրույցների արդյունքները	35
2.1 Ամփոփագիր.....	37
2.2 Հարցազրույցի մասնակիցների կողմից հարցազրույցի ընթացքում տրված հարցերի հիմնական պատասխանները.....	40
2.3. Եզրակացություններ և առաջարկություններ.....	50
Հավելված 1. Խորին հարցազրույցի մասնակիցների ցանկ	58



Հապավումներ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԱՆ	ՀՀ Առողջապահության նախարարություն
ԱՊՏ	Առողջապահության պետական տեսչություն (ՀՀ ԱՆ)
ԱԶՀ	Ազգային ջրային համագործակցություն (ՀԿ)
ԱՔԵ	Ազգային քաղաքականության երկխոսություն
ԲՆ	ՀՀ Բնապահպանության նախարարություն
ԲՊՏ	Բնապահպանական պետական տեսչություն (ՀՀ ԲՆ)
ԳԱՏՕ	«Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» ծրագիր (ԱՄՆ ՄԶԳ-ի)
ԳԷՀ	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
ԳՄՀՀ	Գերմանիայի միջազգային համագործակցության գործակալություն
ԳՆ	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
ԵԱՀԿ	«Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպություն»
ԵԶԲ	Եվրասիական զարգացման բանկ
ԵՄ	Եվրամիություն
ԵՏՀ	ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով
ԷԵԲՊՆ	ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԲՃ	Հայկական բնապահպանական ճակատ
ՀԵՄԿ	Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն
ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԿՀԱԱՇՄ	<<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> ՀԿ
ՀՀ	Հայաստանի հանրապետություն
ՀՄԿ	<<Հազարամյակի մարտահրավերներ>> կորպորացիա
ՃՄՀԳ	Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության
ՄԱԶՕ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա
ՇՄՎԼՄԿ	Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ
ՈԻԿԶՀ	ՈԻԸԲԱՆ Կայուն զարգացման հիմնադրամ
ՊԳԿ	ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն
ՋԹ	Ջրօգտագործման թույլտվություն
ՋԿՄ	Ջրավազանային կառավարման մարմին
ՋՌԻԿ	Ջրային ռեսուրսների ինտեգրված (համապարփակ) կառավարում
ՋՌԿ	Ջրային ռեսուրսների կառավարում
ՋՌԿԳ	Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (ՀՀ ԲՆ-ի)
ՋՌՄՍՕ	Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում
ՋՏ ԾԻԳ	<<Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ>>
ՋՏՊԿ	Ջրային տնտեսության պետական կոմիտե (ԷԵԲՊՆ –ի)
ՋՕԸ	Ջրօգտագործողների ընկերություն
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՏ	Տնային տնտեսություն
ՓԴԾ	Փոքր դրամաշնորհային ծրագիր (ՄԱԶՕ ԳԷՀ -ի)
ՔՀ	Արաբական տնտեսական զարգացման Քուվեյթի հիմնադրամ
ՖԶԳ	Ֆրանսիական զարգացման գործակալություն
ԿԲՎ	ԿfW Զարգացման բանկ
SCADA	Supervisory Control and Data Acquisition (ջրի մոնիթորինգի համակարգ)
SIDA	Շվեդական միջազգային զարգացման և համագործակցության գործակալություն
UNOPS	ՄԱԿ-ի Ծրագրերի ծառայությունների գրասենյակ



ՄԱՍ 1. Արարատյան դաշտում տնային տնտեսությունների հետազոտության արդյունքները

1.1 Ներածություն

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող <<Զրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում>> (PURE-Water) ծրագրի շրջանակներում ՈԻԲԲԱՆ Կայուն զարգացման հիմնադրամն իրականացրել է Արարատյան դաշտում ջրօգտագործման վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտություն, որի նպատակն էր պարզել ջրային ռեսուրսների կառավարման, ջրի որակի, օգտագործման, առկայության և համապատասխան մարմինների պարտականությունների վերաբերյալ բնակիչների իրազեկվածությունը, դիրքորոշումներն ու գիտելիքները:

Հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտությունն անցկացվել է Արարատի և Արմավիրի մարզերի բոլոր վեց քաղաքներում (Արտաշատ, Արարատ, Արմավիր, Մասիս, Վաղարշապատ, Վեդի) և 16 պատահականորեն ընտրված գյուղերում (8-ը Արարատի մարզում և 8-ը՝ Արմավիրի, տես Աղյուսակ 1): Գյուղական բնակավայրերի ընտրանքն իրականացվել է ստրատիֆիկացված սիստեմատիկ պատահական ընտրանքով. ա) յուրաքանչյուր մարզի բոլոր գյուղերը խմբավորվել են հարաբերականորեն մեծ և փոքր գյուղերի՝ այդ մարզերի բնակավայրերի տնային տնտեսությունների (SS) միջին (694) թվաքանակից բարձր կամ ցածր սկզբունքով, և բ) յուրաքանչյուր տեսակի 4 գյուղեր (4 մեծ, 4 փոքր) ընտրվել են յուրաքանչյուր մարզում՝ սիստեմատիկ պատահական ընտրությամբ:

Ընդամենը 385 տնային տնտեսություններ հարցվել (104 քաղաքային և 281 գյուղական), որպեսզի Արարատյան դաշտի (Արարատի և Արմավիրի մարզերի համար) ներկայացուցչական ընտրանք ձևավորվի (95% վստահության մակարդակով և վստահության 5 միջակայքով):

Հետազոտության գործիքը՝ SS հարցաթերթը, մշակվել է ՈԻԿԶՀ-ի հետազոտության ղեկավարի/սոցիոլոգի/ կողմից, և լրամշակվել է <<Ազգային ջրային համագործակցություն>> գիտական-բնապահպանական ՀԿ-ի, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի, ՈԻԿԶՀ-ի, և ԱՄՆ ՄԶԳ ԳՍՏՕ ծրագրի աշխատակիցների/փորձագետների օգնությամբ:

Հարցաթերթի կառուցվածքն ընդգրկում է հետևյալ բաժինները/հարցերը.

1. *Տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական կարգավիճակն ու ժողովրդագրական բնութագիրը. չափահաս արական և իգական անդամների, ինչպես նաև բոլոր անդամների քանակը SS-ում, հարցվողի կրթությունը,*



տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու հմտությունները, զբաղվածության կարգավիճակը, SS-ների տնտեսական պայմանները, մոտավոր տարեկան դրամական եկամուտը, ինչպես նաև հարցվողի սեռն ու տարիքը:

2. Խմելու և ոռոգման ջրերի առկայությունը, որակն ու հասանելիությունը SS-ների համար;
3. Համայնքում խմելու և ոռոգման ջրերի հետ կապված խնդիրների վերաբերյալ իրազեկվածությունը; ինչպես նաև
4. Քաղաքացիական ակտիվություն, և ջրային ռեսուրսներին առնչվող որոշումների կայացման և մոնիթորինգի գործընթացներին մասնակցություն:

Մոտավորապես 80 հարց է տրվել յուրաքանչյուր հարցվողի (չափահաս SS անդամի, ով տեղյակ է SS-ում ջրի վերաբերյալ խնդիրներին), և հարցազրույցի միջին տևողությունը կազմել է 12 րոպե:

Հարցազրույցներն անցկացվել են չորս փորձառու հարցազրուցավարների կողմից, ովքեր նախապատրաստվել են նախքան հետազոտության դաշտային աշխատանքները: Հարցաթերթը 2017 թ. մայիսի 28-ին Արարատի մարզի բնակավայրերից մեկում փորձարկվել է, որի արդյունքում փոքր փոփոխություններ են կատարվել և հարցաթերթը վերջնականացվել է (հաստատվելով ՈՒԿԶՀ-ի կողմից) 2017թ. մայիսի 31-ին:

SS հարցումներն անցկացվել են մայիսի 31-ից հունիսի 7-ը ընկած ժամանակահատվածում: Ստորև բերված աղյուսակը պարունակում է բնակավայրերի անվանումները, որտեղ անցկացվել է հարցումը, համապատասխան մարզի անվանումը, բնակավայրերի տեսակները (քաղաքային / գյուղական), յուրաքանչյուր բնակավայրում հարցված SS-ների քանակը, համապատասխան ջրավազանային կառավարման տարածքների անվանումները և յուրաքանչյուր բնակավայրում խմելու ջուր մատակարարող կազմակերպության մասին տվյալներ:

Աղյուսակ 1. Յուրաքանչյուր բնակավայրում հարցված SS-ների քանակը

<i>Մարզը</i>	<i>Բնակավայրի անվանումը</i>	<i>Բնակավայրի տեսակը</i>	<i>Հարցված SS քանակը</i>	<i>Ջրավազանային կառավարման տարածք</i>	<i>Խմելու ջուր մատակարարող կազմակերպ.</i>
Արարատ	Մասիս	Քաղ.	20	Հրազդան	<<Վեոլիա Ջուր>>
	Արտաշատ	Գյուղական	17	Արարատ	<<Վեոլիա Ջուր>>
	Արարատ	Քաղ.	16	Արարատ	<<Վեոլիա Ջուր>>
	Վեդի	Քաղ.	17	Արարատ	<<Վեոլիա Ջուր>>
	Շահումյան	Գյուղական	17	Արարատ	<<Վեոլիա Ջուր>>
	Փոքր Վեդի	Գյուղական	16	Արարատ	<<Վեոլիա Ջուր>>
	Նոր Կյանք	Գյուղական	16	Արարատ	<<Վեոլիա Ջուր>>
	Արայեզ	Գյուղական	16	Արարատ	<<Վեոլիա Ջուր>>
	Նորամարգ	Գյուղական	19	Հրազդան	Չկա
Սիս	Գյուղական	21	Հրազդան	Չկա	



	Ջրահովիտ	Գյուղական	21	Հրազդան	<<Վեոլիա Ջուր>>
	Սիփանիկ	Գյուղական	20	Հրազդան	Չկա
Արմավիր	Վաղարշապատ	Քաղ.	17	Հրազդան	<<Վեոլիա Ջուր>>
	Արմավիր	Քաղ.	17	Ախուրյան	Չկա
	Մերձավան	Գյուղական	17	Հրազդան	<<Վեոլիա Ջուր>>
	Նորակերտ	Գյուղական	17	Հրազդան	<<Վեոլիա Ջուր>>
	Մուսայեռ	Գյուղական	17	Հրազդան	<<Վեոլիա Ջուր>>
	Լուկաշին	Գյուղական	17	Ախուրյան	Չկա
	Մայիսյան	Գյուղական	17	Ախուրյան	<<Վեոլիա Ջուր>>
	Լենուղի	Գյուղական	17	Ախուրյան	Չկա
	Արտաշար	Գյուղական	17	Ախուրյան	Չկա
	Ֆերիկ	Գյուղական	16	Ախուրյան	<<Վեոլիա Ջուր>>

Հատկանշական է, որ Հայաստանի տարածքը բաժանված է 10 վարչական շրջանների՝ մարզերի, Երևան քաղաքն ունի 11-րդ մարզի կարգավիճակ (որպես մայրաքաղաք, որը երկրի բնակչության 1/3-ն է ընդգրկում): Հանրապետությունը բաժանված է վեց ջրավազանային կառավարման տարածքների՝ Հյուսիսային, Սևան, Հրազդան, Արարատ, Ախուրյան և հարավային ավազաններ: Արարատյան դաշտավայրը ներառում է երկու մարզ՝ Արարատ և Արմավիր: Երեք ավազանային կառավարման տարածքներից (Հրազդան, Արարատ, Ախուրյան) համայնքներ գտնվում են Արարատյան դաշտում:

Աղյուսակ 1-ում նշված է, որ Արարատյան դաշտավայրում ընտրված 16 գյուղական և 6 քաղաքային բնակավայրերը երեք ջրավազանային կառավարման տարածքներից են՝ Արարատ, Հրազդան ու Ախուրյան: Բացի այդ, 22 ընտրված բնակավայրերից 15-ը սպասարկվում են «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից (մասնավոր խմելու ջրի մատակարարող ընկերություն), մինչդեռ մնացածը (7) չեն սպասարկվում որևէ օպերատորի կողմից (գտնվում են ՏԻՄ-երի ենթակայության տակ):

Թեև այս զեկույցը փորձում է համեմատական վերլուծություններ կատարել երկու մարզերի (Արարատ և Արմավիր), երեք ավազանային կառավարման տարածքների (Արարատ, Հրազդան և Ախուրյան) և խմելու ջրի մատակարարման եղանակով պայմանավորված երկու տեսակի համայնքների միջև, այնուամենայնիվ, պետք է նշել, որ այս հետազոտության ընտրանքի նախագիծը կատարվել է նպատակ ունենալով ստանալ հավաստի տեղեկություններ ամբողջ Արարատյան դաշտը ներկայացնող բնակչության վերաբերյալ, և տարբեր ենթախմբերի միջև արդյունքների համեմատական վերլուծությունները (այսինքն, մարզերի, ջրավազանային կառավարման տարածքների միջև, կամ «Վեոլիայի» ծածկույթով պայմանավորված համայնքների միջև) կարող է ունենալ վստահության ավելի ցածր մակարդակ՝ հետազոտության մեջ ներգրավված համեմատաբար փոքր ենթաբազմության չափերի պատճառով:



1.2 Ամփոփագիր

Հայաստանը համարվում է բնակչության կարիքների բավարարման համար բավարար ջրային ռեսուրսներ ունեցող երկիր (տարեկան մեկ շնչի հաշվով մոտավորապես 3100 խորանարդ մետր): Երկիրն ունի զգալի ստորերկրյա ջրային ռեսուրսներ, և խմելու նպատակով օգտագործվող ջրի մոտ 96 տոկոսը և ընդհանուր ջրառի շուրջ 40 տոկոսը կազմում են ստորերկրյա ջրերը (ՀԲ 2015թ. զեկույց): Այնուամենայնիվ, ինչպես այս ուսումնասիրության արդյունքում պարզվեց, Արարատյան դաշտի բնակչության մի մեծ մասը չի ստանում որակյալ խմելու ջուր և իրենց հողամասերը ռոռգելու համար բավարար քանակի ռոռգման ջուր (հատկապես ամռանը, երբ ռոռգման կարիքն առավել մեծ է): Չնայած ջրի սակավությունը կարելի է բացատրել գետերի հոսքի սեզոնային և տարեկան փոփոխականությամբ և ջրամբարների ոչ բավարար քանակով կամ տարողությամբ, պետական մարմինների կողմից ջրային ռեսուրսների անարդյունավետ կառավարումն այդ խնդիրների հիմնական պատճառներից մեկն է: Այս ոլորտում կոռուպցիան բարձր է և ջրի խնդիրների լուծման համար երբեմն զգացվում է քաղաքական կամքի բացակայությունը: Արտեզյան ջրային ռեսուրսների (հատկապես ձկնաբուծության մեջ) անարդյունավետ կառավարումը և այդ ջրերի չափից մեծ արդյունահանումը հանգեցրել են հողի դեգրադացման, աղտոտման և աղակալման: Արարատյան դաշտի ինքնաշատրվանող արտեզյան ջրավազանի մակերեսը երեք անգամ փոքրացել է, տարբեր հորիզոններում ջրային ռեսուրսները խառնվել են, որոշ շենքերում ճեղքվածքներ են առաջացել, և աճել են այդ տարածքում սեյսմիկ ռիսկերը (որտեղ նվազել է ստորերկրյա ջրերի դրական ճնշումը): Ոռոգման ջրի բացակայության պատճառով Արարատյան դաշտի շատ բնակիչներ ստիպված վաճառում են իրենց տները, հողամասերը և արտագաղթում են երկրից: Հետևաբար, երկրի ջրային ռեսուրսներին պատճառվող հետագա վնասները և բնակչության վրա սոցիալ-տնտեսական բացասական հետևանքները (եկամտի կորուստ, արտագաղթ և այլն) կանխելու համար անհրաժեշտ է իրականացնել համապատասխան քաղաքականություն և ծրագրեր՝ ուղղված վերը նշված բնապահպանական և սոցիալ-տնտեսական խնդիրների վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացմանը, ջրի արտադրողականության բարձրացմանը, բնակչության կողմից ջրի խնայողական օգտագործումը խթանելուն, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներգրավմանը՝ ջրի հետ կապված խնդիրների առավել բարձր վերահսկողության և լուծման նպատակով:



1.3 Հետազոտության արդյունքները

1.3.1 Խմելու ջուր

Արարատյան դաշտի բնակիչների շրջանում 2017 թ. հունիսի սկզբին անցկացված տնային տնտեսությունների հարցման ընթացքում մի շարք հարցեր են տրվել, որպեսզի որոշվի խմելու ջրի մատչելիությունը, որակը և հասանելիությունը: Ի պատասխան այն հարցին, թե «Ինչպե՞ս եք հիմնականում խմելու ջուր ստանում Ձեր տնային տնտեսությունում», հետևյալ պատասխաններն են ստացվել (տես ստորև Աղյուսակ 2-ը)։

Աղյուսակ 2. ՏՏ կարիքների համար խմելու ջրի ստացման եղանակները (հարցվողների քանակը).

Մարզը	Համայնքը	Խմելու ջրի ծորակից (տան ներսում)	Խմելու ջրի ծորակից (տան քակում)	Գնում ենք այն	Վերցնում ենք հարևաններից/փողոցային ծորակից/այլ	Ընդամենը
Արարատ	Արալեզ	14	2			16
	Արարատ	15	1			16
	Արտաշատ	17				17
	Ջրահովիտ	8	2	2	9	21
	Մասիս	12		5	3	20
	Նոր Կյանք	16				16
	Նորամարգ	8	3	1	7	19
	Փոքր Վեղի	12	4			16
	Շահումյան	15	2			17
	Միփանիկ	10	5		5	20
	Միս	8	5	4	4	21
	Վեղի	15	2			17
	Ընդամենը	150	26	12	28	216
Արմավիր	Արմավիր	12		5		17
	Արտաշատ	9	7		1	17
	Ճերիկ	12	4			16
	Լենուղի	9	5	3		17
	Լուկաշին	12	1	4		17
	Մայիսյան	16	1			17
	Մերձավան	16		1		17
	Մուսայեռ	16	1			17
	Նորակերտ	16	1			17
	Վաղարշապատ	17				17
	Ընդամենը	135	20	13	1	169



Այսպիսով, Արարատյան դաշտում պատահականորեն ընտրված 385 ընտանիքներից ստացված տվյալների վերլուծության հիման վրա կարող ենք եզրակացնել ($\pm 5\%$ սահմանային սխալով), որ Արարատյան դաշտի բնակչության 86 տոկոսը խմելու ջուր է ստանում ծորակից (տան ներսում կամ տան քակում), 6.5% -ը գնում է ջուր, իսկ 7.5% -ը այլ վայրերից է ջուր բերում (հարևաններից, համայնքի ջրհորից, և այլն): **Քաղաքային** բնակավայրերում բնակչության 87.5 տոկոսն է տան ծորակից ստանում խմելու ջուր, 9.6% -ը գնում է ջուր, և 2.9% -ը այլ վայրերից է խմելու ջուր բերում (հարևաններից, համայնքի ջրհորից, և այլն), իսկ **գյուղական** բնակավայրերում 85.4 տոկոսն է խմելու ջուր ստանում տան կամ քակի ծորակից, 5.3 տոկոսը գնում է խմելու ջուր, իսկ 9.4 տոկոսը ջուր է բերում այլ վայրերից (հարևաններից, համայնքի ջրհորից, և այլն):

Այն համայնքներում, որոնք սպասարկվում են Վեոլիայի կողմից, բնակչության 92.2 տոկոսն է խմելու ջուր ստանում տան/քակի ծորակից, մինչդեռ Վեոլիա-ի կողմից չսպասարկվող համայնքներում ընդամենը 73.4 տոկոսն է խմելու ջուր ստանում տան/քակի ծորակից:

Այն SS-ներին, որոնք ջուր չէին ստանում տան/քակի ծորակից (բոլոր SS-ների 14%-ը) հարցեր են ուղղվել կապված ջուր չունենալու պատճառների հետ: Նրանց 38 տոկոսը բացատրել է, որ տանը ծորակից խմելու ջուր չստանալը կապված է համայնքում ջրամատակարարման խողովակների բացակայության հետ, 51 տոկոսը նշել է, որ իրենց տան ծորակից հոսող ջուրը չի կարող համարվել «խմելու ջուր», իսկ մնացածը (11 տոկոսը) չգիտի պատճառը, կամ այլ պատճառներ է նշել:

Ջրամատակարարման տևողությունը. Արարատյան դաշտում SS-ների մոտավորապես 37 տոկոսն ունեն մշտական (24 ժամ/օր) խմելու ջրի¹ մատակարարում: Մնացածը ջուրը ստանում են ընդհատումներով. SS-ների 13%-ը խմելու ջուր է ստանում օրական 2-5 ժամ, 16%-ը՝ 6-10 ժամ, 15% -ը՝ 11-20 ժամ, իսկ 6% -ը՝ անկանոն, օրական 0-ից մինչև 24 ժամ (կամ երկու օրը մեկ անգամ): Ջրամատակարարման տևողության առումով մեծ տարբերություն կա Վեոլիա-ի ծածկույթի ներսում և դրանից դուրս գտնվող համայնքների միջև: Չարմանալիորեն, այն համայնքներում, որտեղ բացակայում է Վեոլիա-ի ծառայությունը (Լուկաշին, Սիփանիկ, Նորամարգ, Արմավիր, Միս և այլն), բնակչության 59.4% -ը ունեն շուրջօրյա ջրամատակարարում, մինչդեռ Վեոլիա-ի կողմից սպասարկվող համայնքներում ընդամենը 26.5 տոկոսն ունեն շուրջօրյա ջրամատակարարում (բացառությամբ որոշ համայնքների՝ Ֆերիկ, Նորակերտ, Մուսալեռ, Վաղարշապատ, և այլ համայնքների, որտեղ բնակիչների 59-100%-ը նշել են, որ ունեն շուրջօրյա ջրամատակարարում): *Լրացուցիչ մանրամասների համար տես ստորև բերված Աղյուսակ 3-ը:*

¹ Նշենք, որ շատերը իրենց տան ծորակից հոսող ջուրը չեն համարում «խմելու ջուր», այդ պատճառով նրանք SS կարիքների համար ջուր են բերում այլ վայրերից, կամ գնում են այն:



Աղյուսակ 3. Համայնքներում խմելու ջրի մատակարարման տևողությունը (% համայնքի ՏՏ-ների ընդհանուր թվից).

	Համայնքներ	Խմելու ջրի մատակարարման տևողությունը (ժամ)					ԴՊ/ԱԶ	Ընդամենը (%)
		0-24	2-5	6-10	11-20	24		
Վեոլիա-ի ծածկույթից դուրս	Արմավիր					64.7	35.3	100.0
	Արտաշար	5.9		23.5	17.6	47.1	5.9	100.0
	Լենուղի		47.1	47.1			5.9	100.0
	Լուկաշին					94.1	5.9	100.0
	Նորամարգ					68.4	31.6	100.0
	Միփանիկ					75.0	25.0	100.0
	Միս					61.9	38.1	100.0
	Ընդամենը	0.8	6.3	9.4	2.3	59.4	21.9	100.0
Վեոլիա-ի ծածկույթում	Արալեզ	56.3	6.3	31.3	6.3			100.0
	Արարատ	6.3	37.5	37.5		6.3	12.5	100.0
	Արտաշատ			11.8	76.5	11.8		100.0
	Ֆերիկ					100.0		100.0
	Զրահովիտ			4.8	52.4	4.8	38.1	100.0
	Մայիսյան			5.9	58.8	35.3		100.0
	Մասիս			15.0	35.0	5.0	45.0	100.0
	Մերձավան	5.9	41.2	17.6	23.5	5.9	5.9	100.0
	Մուսալեռ			5.9	29.4	64.7		100.0
	Նոր Կյանք		31.3	62.5		6.3		100.0
	Նորակերտ					100.0		100.0
	Փոքր Վեղի	43.8	31.3	25.0				100.0
	Շահումյան		35.3	35.3	23.5	5.9		100.0
	Վաղարշապատ	5.9	17.6	11.8		58.8	5.9	100.0
	Վեղի	17.6	41.2	35.3	5.9			100.0
	Ընդամենը	8.6	15.6	19.5	21.8	26.5	8.2	100.0

Աղյուսակում 4-ում ցույց է տրված ջրամատակարարման տևողությունը Վեոլիայի կողմից սպասարկվող համայնքներում ի տարբերություն Վեոլիայի կողմից չսպասարկվող համայնքների, ինչպես նաև քաղաքային և գյուղական համայնքներում: Վեոլիայի կողմից չսպասարկվող քաղաքային համայնքներում բնակիչների 65%-ն ունեն 24-ժամյա ջրամատակարարում, իսկ Վեոլիայի կողմից սպասարկվող քաղաքային բնակավայրերի միայն 16%-ն ունեն 24-ժամյա ջրամատակարարում: Գյուղական վայրերում նույնպես 24-ժամյա ջրամատակարարում ավելի շատ առկա է Վեոլիայի կողմից չսպասարկվող քան Վեոլիայի կողմից սպասարկվող համայնքներում (59% ընդդեմ 32%): Սա, թերևս, պայմանավորված է նրանով, որ Վեոլիան փորձում է խնայել ջուրը՝ այլ համայնքներին ևս մատակարարելու համար:



Աղյուսակ 4. Խմելու ջրի մատակարարման տևողությունն ըստ բնակավայրերի տիպերի (% բնակավայրերի տիպի մեջ)

		Խմելու ջրի մատակարարման տևողությունը (ժամ)					Տվյալներ չկան/ԴՊ	Ընդամենը (%)
		0-24	2-5	6-10	11-20	24		
Վեոլիայի ծածկույթից դուրս	Քաղաքային					64.7	35.3	100.0
	Գյուղական		7.2	10.8	2.7	58.6	20.7	100.0
	Ընդամենը		6.3	9.4	2.3	59.4	22.7	100.0
Վեոլիայի ծածկույթում	Քաղաքային	2.3	18.4	21.8	24.1	16.1	17.2	100.0
	Գյուղական	1.8	14.1	18.2	20.6	31.8	13.5	100.0
	Ընդամենը	1.9	15.6	19.5	21.8	26.5	14.8	100.0

Ինչպես երևում է Աղյուսակ 5-ում, Արարատի մարզի բնակիչներին անհամեմատ ավելի շատ է հասանելի 24-ժամյա ջրամատակարարումը այն բնակավայրերում, որոնք Վեոլիայի ծածկույթից դուրս են գտնվում (Նորամարզ, Միս, Միփանիկ), մինչդեռ Արմավիրի մարզում Վեոլիայի ծածկույթում գտնվող համայնքներում է առավել տարածված 24-ժամյա ջրամատակարարումը (Ֆերիկ, Նորակերտ, Մուսալեռ և այլն):

Աղյուսակ 5. Խմելու ջրի մատակարարման տևողությունն ըստ մարզերի (% մարզերում/Վեոլիայի ծածկույթում)

Մարզ		Խմելու ջրի մատակարարման տևողությունը (ժամ)					Տվյալներ չկան/ԴՊ	Ընդամենը (%)
		0-24 (անկանոն)	2-5	6-10	11-20	24		
Վեոլիայի ծածկույթից դուրս	Արարատ					68.3	31.7	100
	Արմավիր	1.5	11.8	17.6	4.4	51.5	13.2	100
	Ընդամենը	0.8	6.3	9.4	2.3	59.4	21.9	100
Վեոլիայի ծածկույթում	Արարատ	12.9	19.2	27.6	23.7	4.5	12.2	100
	Արմավիր	2.0	9.9	6.9	18.8	60.4	2.0	100
	Ընդամենը	8.5	15.6	19.5	21.8	26.5	8.2	100

Ջրամատակարարման դիմաց վճարումները: Տնային տնտեսությունները միջինը վճարում են խմելու ջրի դիմաց մոտ 2000 դրամ ամսական, միջակայքը՝ 0-7000 դրամ (SS-ների 7% -ը նշել է, որ իրենք բոլորովին չեն վճարում ջրի համար): SS-ների միայն 7 տոկոսն է հայտնել այն մասին, որ պարտքեր ունեն խմելու ջրի համար: Հարկ է նշել, որ SS-ների 77 տոկոսը նշել է, որ իրենց տանն ունեն խմելու ջրի ջրաչափ: Ջրաչափ չունեցողների 36 տոկոսը



նշել են, որ իրենք ֆիքսված գումար են մուծում ջրի դիմաց գյուղի/ քաղաքի վարչակազմին, 32 տոկոսը ֆիքսված գումար է վճարում համայնքում ջրի գումարներ հավաքողին, և 21 տոկոսը նրանց, ովքեր չունեն ջրաչափ (հիմնականում Արարատի մարզի Սիփանիկ և Նորամարգ գյուղերում, որոնք Վեոլիայի ծածկույթից դուրս են) նշել են, որ նրանք չեն վճարում խմելու ջրի դիմաց: SS-ների 77 տոկոսը խմելու ջրի վճարումները կատարում ամեն ամիս, 11 տոկոսը՝ տարին մեկ կամ մի քանի անգամ, և բոլոր SS-ների 7% -ը նշել են, որ իրենք չեն վճարում խմելու ջրի դիմաց: Ինչ վերաբերում է չվճարողներին, ապա նրանք հետևյալ համայնքներից են՝ Արարատի մարզի Սիփանիկ գյուղ՝ բնակիչների մոտ 85%-ը, Նորամարգ գյուղ՝ բնակիչների մոտ 26%-ը: Հարկ է նշել, որ այս երկու գյուղերն էլ Վեոլիայի ծածկույթից դուրս են գտնվում, որտեղ բնակիչները գյուղի արտեզյան աղբյուրներից ստացվող ջուրն օգտագործում են և խմելու և ոռոգման նպատակով, և որտեղ շատերը համարում են, որ իրենք խմելու որակի ջուր չեն ստանում: Խմելու ջրամատակարարման դիմաց չեն վճարում նաև Մասիս (15%) և Արարատ (6%) քաղաքների բնակիչները:

Բնակիչների բավարարվածությունը ջրի ճնշումից: Արարատյան դաշտի բնակիչների 64%-ը բավարարված են խմելու ջրամատակարարման ճնշումից, մինչդեռ 35%-ը՝ բավարարված չեն: Վեոլիայի ծածկույթում գտնվող բնակավայրերի բնակիչներն ավելի գոհ են խմելու ջրամատակարարման ճնշումից, քան Վեոլիայի ծածկույթից դուրս գտնվող բնակավայրերի բնակիչները (69% ընդդեմ 55%-ի):

Բնակիչների բավարարվածությունը ջրամատակարարման տևողությունից: Չնայած Արարատյան դաշտի բնակիչների միան 1/3-ն ունի 24-ժամյա ջրամատակարարում, SS-ների մեծամասնությունը (62%) գոհ են ջրամատակարարման տևողությունից (37%-ը՝ գոհ չեն): Վեոլիայի ծածկույթում գտնվող քաղաքային համայնքների բնակիչներն (58%-ը) ավելի դժգոհ են ջրամատակարարման տևողությունից, քանի որ այդ համայնքներում բնակիչների ընդամենը 16%-ն ունի 24-ժամյա ջրամատակարարում:

Խմելու ջրի որակը (համ, հոտ, գույն, մաքրություն): Այս հարցմամբ պարզվեց, որ Արարատյան դաշտի բնակիչների կեսն են միայն գոհ (53 %-ը) իրենց բնակավայրին մատակարարվող խմելու ջրի որակից: Վեոլիայի ծածկույթի բնակավայրերում ավելի շատ բնակիչներ են գոհ ջրի որակից, քանի Վեոլիայի ծածկույթից դուրս գտնվող վայրերում (60% ընդդեմ 38%-ի): Գյուղական համայնքներում ջրի որակն ըստ բնակիչների ավելի բարձր է, քան քաղաքային համայնքներում (55% ընդդեմ 46%-ի): Այս տարբերությունն ավելի մեծ է Արմավիրի մարզում, որտեղ գյուղաբնակների 62%-ն է գոհ ջրի որակից, իսկ քաղաքաբնակների 32%-ը: .



1.3.2 Ոռոգման ջուր

Հողակտորներ: Արարատյան դաշտում հետազոտված SS-ների 82 տոկոսն (314/385) ունեին տնամերձ հողակտորներ, որոնց մակերեսը կազմում է 30 քառ. մետրից (քաղաքներում) մինչև 1.2 հա, միջինը՝ 1300 քառ. մետր: Բացի այդ, հարցված SS-ների 46 տոկոսը (n=177) նաև ունեին այլ հողակտորներ (նույն համայնքում), որոնց մակերեսը հասնում էր մինչև 5 հա, միջինը՝ 10.953 քառ. մետր (միջնագիծ =8000 քառ. մ.), մոտ 1.1 հա:

Ոռոգման մեթոդներ: Ինչպես երևում է Աղյուսակ 6-ում, Արարատյան դաշտի SS-ների մոտ 32.8 տոկոսը ոռոգում են իրենց տնամերձ հողակտորները արտեզյան ջրով (սեփական պոմպով արդյունահանվող): Դրանք հիմնականում հետևյալ համայնքների բնակիչներն են՝ Վաղարշապատ, Արտաշատ, Շահումյան, Արտաշար, Ջրահովիտ, Փոքր Վեդի, և այլն: SS-ների 28.3%-ը ոռոգում են իրենց տնամերձ հողակտորները համայնքի ոռոգման առվակներով, 8% -ը՝ համայնքի արտեզյան ջրով (հիմնականում Միս և Նոր Կյանք գյուղերում), 7.3% -ը՝ միջհամայնքային ջրանցքներով, 6.4% -ը՝ ոռոգման խողովակներով, 6.1%-ը՝ խմելու ջրով (Մերձավանում, Արմավիրում, Արարատում, Մուսալեռում, և այլն): SS-ների 10.2 տոկոսը նշել է, որ չի ոռոգում տնամերձ հողամասը:

Ինչ վերաբերում է Արարատյան դաշտում մշակվող այլ (ավելի մեծ) հողակտորներին, ապա այդ SS-ների 50.8%-ը նշել է, որ իրենք ոռոգում են այդ հողակտորները համայնքի ոռոգման առվակներով, 6.2% -ը՝ միջհամայնքային ջրանցքներով, 4% -ը՝ ոռոգման խողովակներով, 6.8% -ը՝ սեփական պոմպով արդյունահանվող արտեզյան ջրով (հիմնականում Արարատ, Մասիս, Վեդի, Նոր Կյանք, Շահումյան և այլ համայնքներում), և մի մեծ մաս էլ (27.7%) նշել է, որ իրենք չեն ոռոգում այդ հողակտորները, քանի որ նրանք չեն մշակում այդ հողերը: Դրանք Արարատի, Մասիսի, Նորամարգի, Արտաշատի, Մերձավանի, Վաղարշապատի և այլ համայնքների բնակիչներն են:

Աղյուսակ 6. <<Հիմնականում ինչպե՞ս էք ոռոգում Ձեր հողամաս/եր/ը>>:

Ոռոգման մեթոդը	Տնամերձ	Այլ հողեր
Միջհամայնքային ջրանցքներով	7.3%	6.2%
Ոռոգման առվակներով	28.3%	50.8%
Ոռոգման խողովակներով	6.4%	4.0%
Արտեզյան ջրով (սեփական պոմպով արդյունահանվող)	32.8%	6.8%
Համայնքի արտեզյան ջրով	8.0%	4.0%
Խմելու ջրով	6.1%	0%
Անձրևաջրերով/հայոցքային ջրերով	0.3%	0%
Չեն մշակում հողը / չեն ոռոգում այն	10.2%	27.7%

Ոռոգման ջրի հասանելիություն: Հողակտորներ ունեցող SS-ների 21 տոկոսը նշել է, որ նրանք միշտ ունեն բավարար քանակի ոռոգման ջուր; 36 տոկոսը հիմնականում ունի



ջուր, 24 տոկոսը էրբեմն ունի, երբեմն չունի, 13 տոկոսը հիմնականում չունի, և 4 տոկոսը բոլորովին չի ստանում ռոռզման ջուր (մնացած 2 տոկոսը տեղյակ չէին):

Ինչ վերաբերում է այն SS-ներին, որոնք ունեն 1000 քառակուսի մետրից մեծ հողակտորներ, ապա նրանք 12.4%-ը նշել է, որ նրանք միշտ ունեն բավարար քանակի ռոռզման ջուր; 40 տոկոսը հիմնականում ունի ջուր, 28.6 տոկոսը էրբեմն ունի, երբեմն չունի, 13 տոկոսը հիմնականում չունի, և 3.7 տոկոսը բոլորովին չի ստանում ռոռզման ջուր:

Համայնքները, որոնք համեմատաբար լավ հասանելիություն ունեցող (այսինքն այնտեղ, որտեղ բնակիչների առնվազն 60%-ը նշել է, որ մշտապես կամ հիմնականում ունեն ռոռզման ջուր) համայնքներն են՝

- Արարատի մարզում – Վեդի, Ջրահովիտ, Փոքր Վեդի, Շահումյան, Նոր Կյանք համայնքները,
- Արմավիրի մարզում - Մերձավան, Ֆերիկ, Լենուղի համայնքները:

Բավարար քանակի ռոռզման ջուր չունենալու պատճառներն ըստ հարցվողների: Այն SS-ներին, որոնք նշել են, որ բավարար քանակի ռոռզման ջուր չեն ստանում (հողակտորներ ունեցող բոլոր SS-ների 41%-ը), հարցվել է բավարար քանակի ռոռզման ջուր չստանալու պատճառների մասին: Ինչպես երևում է Աղյուսակ 7-ում, այդ SS-ների 58 տոկոսը նշել են հետևյալ պատճառները. 1. Ռոռզման ջրի քանակը պակասել է և չի բավարարում բնակիչների պահանջներին, 2. Ռոռզելի հողատարածքների մակերեսը մեծացել է և ջրի քանակը չի բավարարում: Բացի դա, SS-ների 11 տոկոսը ջուր չունենալը բացատրել է համայնքում պատշաճ ռոռզման ցանցի բացակայությամբ, 7 տոկոսը՝ արտեզյան ջրերի մակարդակի նվազմամբ, 3 տոկոսը՝ ջրի դիմաց ունեցած պարտքերով, 2 տոկոսը՝ ՋՕԸ-երի անարդյունավետ աշխատանքով, 10 տոկոսն այլ պատճառներ է նշել, իսկ 9 տոկոսը չի կարողացել բացատրի այն:

Աղյուսակ 7. <<Ի՞նչ պատճառով բավարար քանակի ռոռզման ջուր չունեք>>:

Ռոռզման ջրի քանակը պակասել է և չի բավարարում բնակիչների պահանջներին	32%
Ռոռզելի հողատարածքների մակերեսը մեծացել է և ջրի քանակը չի բավարարում	26%
Համայնքում պատշաճ ռոռզման ցանց չկա	11%
Արտեզյան/ստորգետնյա ջրերի մակարդակն իջել է	7%
Կուտակված պարտքեր ունեն ռոռզման ջրի դիմաց, այդ պատճառով ջուր չեն տալիս	3%
Ջրօգտագործողների ընկերության (ՋՕԸ) անարդյունավետ աշխատանքի պատճառով	2%
Այլ պատասխան	10%
Չգիտեմ	9%



Ոռոգման ջրի դիմաց վճարումները: Ինչ վերաբերում է ոռոգման ջրի դիմաց վճարումներին, ապա հողակտորներ ունեցող SS-ների 26-36 տոկոսը² նշել են, որ չեն վճարում ոռոգման ջրի դիմաց, և 53%-ը այն SS-ներն են, որոնք ոռոգում են իրենց հեղակտորները արտեզյան ջրով (սեփական պոմպով արդյունահանվող): Սա կարող է բացատրվել այն փաստով, որ SS-ների մեծ մասը (28%) չեն մշակում իրենց հողակտորները:

հողը ոռոգող տնտեսություններն են, որոնք վճարում են միայն պոմպերի սպառած էլեկտրոգիայի դիմաց: Մյուս մասը նրանք են, ովքեր հողը չեն մշակում, և հետևաբար չեն վճարում ոռոգման ջրի համար: Հողակտորներ ունեցող SS-ների միայն 48%-ն է նշել, թե որքան է վճարում ոռոգման ջրի դիմաց: Տարեկան կտրվածքով այդ գումարը միջինը կազմում է 64.000 դրամ, սկսած 12.000-ից մինչև 400.000 դրամ և ավելի վճարողներ էլ կան:

Հողակտորներ ունեցող SS-ների միայն 10%-ն է նշել, որ կուտակված պարտքեր ունի ոռոգման ջրի դիմաց: Այդ պարտքերը կազմում են 5,700-ից 400,000 դրամ, միջինը՝ 114,000 դրամ:

Ինչ վերաբերում է ոռոգման ջրի դիմաց վճարումների հաճախականությանը, ընդհանուր առմամբ պրակտիկան այն է, որ քաղաքացիները վճարում են ոռոգման ջրի համար՝ իրենց հողատարածքները ոռոգելուց հետո մի քանի օրվա ընթացքում: Ոռոգման հաճախականությունն էլ կապված է աճեցվող մշակաբույսերի տեսակից և այլ գործոններից: Օրինակ, խաղողի դաշտերը ոռոգվում են տարվա ընթացքում 3-5 անգամ, իսկ բանջարեղենի դաշտերը՝ ավելի հաճախակի: Ի պատասխան այն հարցին, թե <<Ինչ հաճախականությամբ եք վճարում ոռոգման ջրի դիմաց>>, հարցվողների 50 տոկոսը նշել է՝ «Տարեկան մի քանի անգամ», 30 տոկոսը՝ «Տարին մեկ անգամ», 11 տոկոսը՝ «Ամեն ամիս», 5 տոկոսը՝ «Ամեն անգամ, երբ ոռոգում ենք մեր հողատարածքը», իսկ մնացածը (4%)՝ անկանոն: Չնայած նրան, որ ՋՕԸ-ն կարող է պահանջել ֆերմերներին վճարել ոռոգման համար ավելի հաճախ, սակայն, ֆերմերների մեծ մասը նշել է, որ իրենց եկամուտը (գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված) ստացվում է տարվա կեսին կամ տարվա վերջին, հետևաբար, նրանք չեն կարող վճարել ջրի համար, մինչև որ նրանք չվաճառեն իրենց արտադրանքը: Եղել են դեպքեր, երբ ֆերմերները չեն կարողացել (կամ չեն ցանկացել) վճարել ոռոգման ջրի համար մեկ տարի կամ ավել, սակայն, ՋՕԸ-ն (Ավշարում) շարունակել է ջուր տրամադրել այդ տնտեսություններին, հասկանալով, որ այդ ֆերմերները իրոք դժվարին սոցիալ-տնտեսական պայմաններում են գտնվում:

² Կախված նմանատիպ հարցերի ձևակերպումից, տարբեր պատասխաններ են ստացվել, այդ պատճառով 26-36% է նշված:



Ոռոգման ջրի որակը: Քանի որ շարքային բնակիչները չեն կարողանում դատել ոռոգման ջրի որակի (քիմիական կազմի) մասին, հետևաբար, բնակիչներին հարցվել է իրենց համայնքներում ոռոգման ջրի աղտոտվածության մասին՝ ի թիվս ոռոգման ջրի հետ կապված մի շարք այլ խնդիրների: Քանի որ բնակիչներին մտահոգող հիմնական խնդիրն են առնչվել են ոռոգման ջրի հասանելիությանը և մատչելիությանը, բնակիչների միայն 9 տոկոսն է (Արարատի մարզի SS-ների 14%-ը և Արմավիրի մարզում՝ 2%-ը) նշել, որ ոռոգման ջրի աղտոտվածությունը իրենց համայնքում ոռոգման ջրի հետ կապված երեք հիմնական խնդիրներից է:

Բնակիչների կողմից ՋՕԸ-երի գնահատումը: Հետազոտության հարցաթերթը ներառել է մի շարք հարցեր ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ) գործունեության մասին: Ի պատասխան այն հարցին, թե «Ի՞նչ պատճառով բավարար քանակի ոռոգման ջուր չունեք», բնակիչների միայն 1.7 տոկոսն է այդ խնդրում մեղադրել ՋՕԸ-երին (3.3% Արմավիրի մարզում և 0% Արարատի մարզում): Իսկ ի պատասխան այն հարցին, թե «Ձեր համայնքում ոռոգման ջրի հետ կապված երեք հիմնական խնդիրները որո՞նք են», ապա միայն 3 տոկոսն է նշել ՋՕԸ-երի անարդյունավետ աշխատանքի մասին, և 8% -ը (12% Արարատում և 3% Արմավիրի մարզերում) նշել է, որ ոռոգման ջուրը չի արդարացիորեն չի բաշխվում բնակիչների միջև, որը նույնպես կարող է վերագրվել ՋՕԸ-երի անարդյունավետ աշխատանքին: Ավելին, Արարատյան դաշտի բնակիչների միայն 38 տոկոսն (32% Արարատի և 46% Արմավիրի մարզերում) է հավատում, որ ՋՕԸ-երն ի վիճակի են լուծելու իրենց համայնքում ոռոգման ջրի հետ կապված խնդիրները: Այսպիսով, թեև ՋՕԸ-երը չունեն բնակիչների մեծամասնության վստահությունը, Արմավիրի մարզի բնակիչները ավելի գոհ են իրենց ՋՕԸ-երից, քան նրանք, ովքեր ապրում են Արարատի մարզում:

1.4 Համայնքում խմելու և ոռոգման ջրերի հետ կապված խնդիրների վերաբերյալ իրազեկվածություն

Ջրօգտագործողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկվածություն: Հարցված SS-ների 9.4 տոկոսը նշել է, որ չունի խմելու կամ ոռոգման ջրի մատակարարման համար պայմանագիր, 55 տոկոսն ուներ, բայց տեղյակ չէր համապատասխանում պայմանագրում նշված իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, և միայն 30 տոկոսն է նշել, որ տեղյակ է այդ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Այդ իրազեկությունն մի քիչ բարձր է տղամարդկանց մոտ, ի տարբերություն կանանց (34% ընդդեմ 28%-ի), իսկ տարիքային կտրվածքով ամենատեղեկացվածները 56-65 տարեկաններն էին (45%), այնուհետև 36-45 տարեկանները (38%): Իսկ ավելի երիտասարդներն ավելի քիչ են տեղյակ խմելու կամ ոռոգման ջրի մատակարարման համար պայմանագրում



ամրագրված իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ. 18-25 տարեկանների միայն 7%-ը, իսկ 26-35 տարեկանների 17%-ն էին տեղեկացված այդ մասին:

Իսկ այն հարցին, թե որոնք են իրենց համայնքում խմելու ջրի հետ կապված երեք խոշորագույն խնդիրները, հետևյալ պատասխաններն են ստացվել (տոկոսների հանրագումարն անցնում է 100%-ից, քանի որ 1-ից 3 տարբերակ են նշել հարցվողները).

Աղյուսակ 8. Համայնքում խմելու ջրի հետ կապված երեք հիմնական խնդիրները

<i>Ջրի որակը ցածր է՝ տհաճ համ/գույն ունի</i>	43%
<i>Ջուրը շուրջօրյա չէ</i>	31%
<i>Ջրի ճնշումը համակարգում ցածր է</i>	22%
<i>Հաճախակի են ջրամատակարարման ոչ պլանային ընդհատումները</i>	9%
<i>Ջրի սակագինը բարձր է</i>	7%
<i>Չի պահպանվում ջրամատակարարման ժամանակացույցը</i>	6%
<i>Ջրի կորուստները շատ են՝ կապված քայքայված համակարգի հետ</i>	6%
<i>Խմելու ջուր չենք ստանում</i>	5%
<i>Բնակավայրի ոչ բոլոր SS-ներն ունեն խմելու ջուր</i>	3%
Խնդիր չկա	30%

Եվ այսպես, Արարատյան դաշտի տնային տնտեսությունների 43 տոկոսը գոհ չեն իրենց տան ծորակից եկող խմելու ջրի որակից: SS-ների 31 տոկոսը նշել է, որ շուրջօրյա ջրամատակարարում չունենալը կարևորագույն խնդիրներից է, 22 տոկոսը նշել է, որ ջրի ճնշումը համակարգում ցածր էր, 9 տոկոսը՝ որ հաճախակի են ջրամատակարարման ոչ պլանային ընդհատումները, և այլն: Հարցվողների 30 տոկոսն էլ նշել է, որ չկա որևէ խնդիր իրենց համայնքում կապված խմելու ջրի մատակարարման հետ:

Ինչ վերաբերում է համայնքում ոռոգման ջրի հետ կապված խնդիրներին, հետևյալ պատասխաններն են ստացվել (տես Աղյուսակ 9-ը ստորև):

Աղյուսակ 9. Համայնքում ոռոգման ջրի հետ կապված հիմնական խնդիրները

<i>Ջրի քանակը համակարգում բավարար չէ իմ կամ համայնքի կարիքների համար</i>	26%
<i>Ջրի սակագինը բարձր է</i>	16%
<i>Ոռոգման ջուր չենք ստանում</i>	13%
<i>Բավարար վերահսկողություն չի իրականացվում ջրօգտագործման ոլորտում</i>	10%
<i>Ջրի որակը ցածր է, աղտոտված է</i>	9%
<i>Ջուրն արդարացիորեն չի բաշխվում գյուղացիական տնտեսությունների միջև</i>	8%
<i>Արտեզյան ջրերի չափից շատ օգտագործումը բնապահպանական աղետի է բերելու</i>	6%
<i>Ջրի կորուստները շատ են</i>	3%
<i>Ջրօգտագործողների բնկերություններն արդյունավետ չեն աշխատում</i>	3%
<i>Ոռոգման կաթիլային համակարգերը մատչելի չեն մեր SS համար</i>	1%




Ամռանը ջրի քանակը բավարար չի	1%
Չկան խնդիրներ	29%

SS-ների 26 տոկոսը գանգատվել է ոռոգման ջրի անբավարար քանակից, 16 տոկոսը նշել է, որ ոռոգման ջրի սակագինը բարձր է, որ նրանք վճարում են ջրի համար բարձր է; 13 տոկոսը նշել է, որ իրենք չեն ստանում ոռոգման ջուր, 10% -ը նշել է, որ չկա համապատասխան վերահսկողություն ոռոգման ջրի օգտագործման բնագավառում, և այլն: Միայն 29 տոկոսն է նշել, որ ոռոգման ջրի հետ կապված խնդիրներ չունեն:

Հարցման մասնակիցները նաև գնահատել են (1-ից 5 բալանոց սանդղակով, որտեղ «1» -ը նշանակում է «Բոլորովին արդյունավետ չէ» իսկ «5» -ը՝ «Շատ արդյունավետ է») իրենց համայնքում ջրի հետ կապված խնդիրները լուծելու հարցում տարբեր մարմինների/կազմակերպությունների արդյունավետությունը: Ստորև բերված գծապատկերում արտացոլված են այդ պատասխանները:


Գծապատկեր 1. Համայնքում ջրի հետ կապված խնդիրները լուծելու հարցում տարբեր մարմինների/կազմակերպությունների արդյունավետությունը (%)



Բնակիչների գերակշիռ մասը՝ 61 տոկոսը կարծում են, որ իրենց համայնքի ղեկավարն է այն անձը, որն ի վիճակի է լուծելու իրենց համայնքում ոռոգման և խմելու ջրերին առնչվող խնդիրները: Մյուս տեղում ավագանին է (51%), երրորդ տեղում՝ համայնքի բնակիչները (40%): Այնուհետ, բնակիչների 38%-ը հակված է վստահելու ՋՕԸ-երին, ապա մարզպետին (35%): Բնակիչները չեն հավատում, որ ՀՀ Բնապահպանության նախարարությունը, կամ այլ պետական կառույցներ, ՀԿ-ները, կամ միջազգային կազմակերպություններն ի վիճակի են լուծելու իրենց համայնքում ջրի հետ կապված խնդիրները: Համայնքների բնակիչները չեն վստահում, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը կամ այլ պետական կառույց, ՀԿ կամ միջազգային կազմակերպություն կարող են (կամ արդյունավետ են) լուծել՝ համայնքում ջրի հետ կապված խնդիրները:


Ինչպես երևում է ստորև Գծապատկեր 2-ում, բնակչության 42 տոկոսը կարծում է, որ քաղաքացիներին չեն ներգրավում Արարատյան դաշտում արտեզյան ջրերի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում: 43 տոկոսը նշել է, որ համապատասխան վերահսկողություն չկա այդ ջրային ռեսուրսների օգտագործման նկատմամբ; 30 տոկոսը գտնում է, որ արտեզյան ջրերի սակագինը բարձր է (41% -ը ընդհակառակը՝ ցածր): Միայն 60 տոկոսն է բնակչության հասկանում, որ արտեզյան ջրերի չափից շատ օգտագործումը կբերի բնապահպանական աղետի: 55 տոկոսը նշել է, որ հորատանցքերի բացումը և պոմպերի տեղադրումը թանկ արժեն (39% - ը ընդհակառակը՝ թանկ չեն); և 26 տոկոսն էլ նշել է, որ դժվար է ստանալ ջրօգտագործման թույլտվություն (46% -ը նշել է, որ դա դժվար չէ):

Գծապատկեր 2. Արարատյան դաշտում արտեզյան ջրերի օգտագործման հետ կապված խնդիրներն են բնակչության պատկերացմամբ



Ինչ վերաբերում է գյուղատնտեսության մեջ ջրի խնայողական տեխնոլոգիաների կիրառմանը, ինչպիսիք են կաթիլային ոռոգման համակարգերը, ապա հարցվողների 37 տոկոսը նշել է, որ նրանք այդ համակարգերի կարիքը չունեն (քանի որ դրանք թանկ են, կամ պարզապես ջուրը խնայելու կարիք չեն զգում), 2 տոկոսը նշել է, որ իրենք օգտագործում են կաթիլային համակարգեր; իսկ մնացածը նշել է, որ իրենք կցանկանային օգտագործել կաթիլային ոռոգման համակարգ, եթե այն մատչելի լիներ, կամ քանի որ այն խնայում է ջուրը, և այլ պատճառներով (տես Գծապատկեր 3-ը ստորև):


Գծապատկեր 3. <<Կցանկանայի՞ք Ձեր հողամաս/-եր/ի ոռոգումը կաթիլային համակարգով հրականացնել>>



Խմելու ջրի ջրաչափեր: Այս հետազոտությունը ցույց տվեց, որ բնակիչների 23 տոկոսը իրենց տանը չունի խմելու ջրի ջրաչափ: Ի պատասխան այն հարցին, թե « Ովքե՞ր պետք է շահագրգռված լինեն և հսկեն, որպեսզի համայնքում ներդրվի խմելու ջրի հաշվառման համակարգ (ջրաչափ)», հետևյալ պատասխաններն են ստացվել (տես Գծապատկեր 4-ը ստորև):



Գծապատկեր 4. « Ովքե՞ր պետք է շահագրգռված լինեն և հսկեն, որպեսզի համայնքում ներդրվի խմելու ջրի հաշվառման համակարգ (ջրաչափ)»³



Այսպիսով, բնակիչների գրեթե կեսը կարծում է, որ ջրամատակարարման կազմակերպությունը («Վեոլիա ջուր») պետք է պատասխանատու լինի տեղադրելու ջրաչափեր է այն ՏՏ-ներում կամ համայնքներում, որտեղ ջրաչափեր չեն տեղադրվել դեռ: Հարկ է նշել, որ այս հետազոտության շրջանակներում որակական հետազոտությունը (փորձագետների/շահառուների շրջանում հարցազրույցներ) պարզվել է, որ Հայաստանի համայնքների կեսից ավելին (560 գյուղեր, որոնք ներառում են բնակչության 1/3-ը) չեն սպասարկվում է «Վեոլիա ջուր» ընկերության կողմից, որը նշանակում է, որ ջրաչափեր կարող են չլինել այդպիսի շատ համայնքներում, եթե ՏԻՄ-երը հոգ չտանեն այդ հարցում: Հարցվողների 34 տոկոսը կարծում են, որ համայնքապետերը պետք է պատասխանատու լինեն իրենց համայնքներում ջրաչափեր տեղադրելու համար:

Հարցման մասնակիցները նաև նշել են իրենց պատկերացմամբ երեք կարևորագույն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են ջրային ռեսուրսների արդյունավետ/խնայողաբար օգտագործման գամար: Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս այդ պատասխանները:

³ Այս հարցին ևս տրվել են 1-ից 3 պատասխաններ, որի պատճառով տոկոսների հանրագումարն անցնում է 100-ից:



Աղյուսակ 10. «Ի՞նչ է անհրաժեշտ ջրային ռեսուրսների առավել արդյունավետ (խնայողաբար) օգտագործման համար»

Պետական վերահսկողություն լինի բոլորի նկատմամբ անխտիր, անկախ նրանց պաշտոնից/դիրքից	35%
Սահմանել շուրջօրյա վերահսկողություն ջրօգտագործման համակարգում՝ թեժ գծի և/կամ ինտերնետային պորտալների միջոցով	21%
Խստացնել վերահսկողությունը և պատժամիջոցները ապօրինի ջրօգտագործման դեպքում	21%
Փոխել մարդկանց վարքագիծը ջրօգտագործման նկատմամբ, որպեսզի առավել խնայողաբար օգտագործեն ջուրը, անտեղի բաց չթողնեն այն	21%
Տեղադրել ջրաչափեր ձկնաբուծարաններում և բոլոր այլ ջրօգտագործողների մոտ	21%
Կիրառել առավել արդյունավետ ոռոգման համակարգեր, օրինակ՝ կաթիլային ոռոգում, հիդրոպոնիկ կամ ակվապոնիկ տեխնոլոգիաներ	18%
Սահմանափակել ստորերկրյա ջրերի արդյունահանումը և օգտագործումը ձկնաբուծության նպատակով	16%
Ջրօգտագործման վերահսկման մեջ ներգրավել բնակիչներին/ քաղաքացիական հասարակությանը	14%
Գյուղատնտեսության մեջ կիրառել ջրի խնայման այլ մեթոդներ	7%
Կառուցել ջրամբարներ	6%
Տեղադրել ջրաչափեր ոռոգման համակարգերում	5%
Տեղադրել ջրաչափեր SS-ներում	4%
Բարձրացնել ձկնաբուծության մեջ կիրառվող ջրի սակագինը	4%
Սահմանափակել ստորերկրյա ջրերի արդյունահանումը և օգտագործումը ոռոգման նպատակով	1%
Այլ պատասխան	11%
Զգիտեն	11%

Այսպիսով, ջրային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման համար բնակիչների կողմից նշված հիմնական (առնվազն 20%-ի կողմից նշված) լուծումներն են՝ պետական վերահսկողություն լինի բոլորի նկատմամբ անխտիր, սահմանել շուրջօրյա վերահսկողություն ջրօգտագործման համակարգում՝ թեժ գծի և/կամ ինտերնետային պորտալների միջոցով, խստացնել վերահսկողությունը և պատժամիջոցները ապօրինի ջրօգտագործման դեպքում, փոխել մարդկանց վարքագիծը ջրօգտագործման նկատմամբ, որպեսզի առավել խնայողաբար օգտագործեն ջուրը, անտեղի բաց չթողնեն այն, տեղադրել ջրաչափեր ձկնաբուծարաններում և բոլոր այլ ջրօգտագործողների մոտ:

Ինչպես երևում է Աղյուսակ 11-ից, բնակչության 65 տոկոսը կարծում է, որ պետությունը պետք է խստացնի վերահսկողությունը Արարատյան դաշտում ձկնաբուծարանների նկատմամբ՝ արտեզյան ջրերի անխնա օգտագործում թույլ չտալու և բնապահպանական աղետի կանխարգելման նպատակով: Ավելի քչերն են համոզված, որ պետք է նաև խստացվի վերահսկողությունը մյուս ջրօգտագործողների՝ արդյունաբերական հիմնարկների և SS-ների հանդեպ:



Աղյուսակ 11. «Համաձայն էք այն մտքի հետ, որ պետք է խստացվի վերահսկողությունը Արարատյան դաշտում հետևյալ ջրօգտագործողների նկատմամբ՝ արտեզյան ջրերի անխնա օգտագործում թույլ չտալու և բնապահպանական աղետի կանխարգելման նպատակով»:

Ջրօգտագործողներ	Այո	Ոչ	Չգիտեմ
Չկնարուծարաններ	65%	14%	21%
Արդյունաբերական հիմնարկներ	40%	23%	37%
SS-ներ (խմելու և ոռոգման ջուր)	26%	48%	25%

1.5 Քաղաքացիական ակտիվություն. բնակիչների մասնակցությունը ջրի հետ առնչվող որոշումների կայացմանը և վերահսկմանը

Համայնքում ջրի հետ կապված խնդիրների լուծման հարցում ՏԻՄ-երի դերը: Հարցված SS-ների 24 տոկոսը նշել է, որ վերջին 12 ամիսների ընթացքում իրենք ունեցել են խմելու կամ ոռոգման ջրի հետ առնչվող խնդիրներ (հիմնականում, ջրամատակարարման ընդհատումներ): Վերջիններիս 37 տոկոսը (այսինքն 92 SS-ց 34-ը) նշել է, որ իրենք չեն բարձրաձայնել այդ խնդիրների մասին իրենց ՏԻՄ-երի մոտ, իսկ 63% -ը բարձրաձայնել են (49 տոկոսը բանավոր կերպով է բարձրացրել, 5 տոկոսը՝ գրավոր ձևով, 7 տոկոսը՝ բանավոր և գրավոր ձևով, 1 տոկոսը՝ ՏԻՄ-երի կայք էջի միջոցով, իսկ 1 տոկոսը՝ զանգվածային լրատվության միջոցով): Տղամարդիկ հակված են այդպիսի խնդիրների մասին բարձրաձայնելու ավելի հաճախ, քան կանայք (67% ընդդեմ 60%-ի), իսկ 26-45 տարիքի անձինք առավել քիչ են բարձրաձայնում այդ մասին (44-52%), քան մյուս տարիքային խմբերի ներկայացուցիչները: Սա մասնավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ բնակիչների մի մեծ բաժինը չի հավատում, որ ՏԻՄ-երն ի վիճակի են լուծել ջրի հետ կապված խնդիրները իրենց համայնքում (հատկապես Վեդլիայի կողմից չսպասարկվող համայնքներում):

Ովքեր բարձրաձայնել են ջրի հետ կապված խնդիրների մասին, նրանց հիսուն տոկոսն ասել է, որ իրենց խնդիրը այդպես էլ չի լուծվել ՏԻՄ-երի կողմից, 11 տոկոսը նշել է, որ իրենց խնդիրը դեռևս քննարկման մեջ է ՏԻՄ-երի կողմից, և միայն 39 տոկոսն է նշել, որ իրենց խնդիրը լուծվել է ՏԻՄ-ի կողմից:


Ջրային ոլորտում իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները: Ինչպես ցույց է ստորև բերված գծապատկերում⁴, բնակիչների 50 տոկոսը իրենց համայնքի ջրային ոլորտում իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում ստանում է համայնքի բնակիչներից, 35 տոկոսը՝

⁴ Այս հարցին տրվել են 1-ից 2 պատասխաններ, որի պատճառով տոկոսների հանրագումարն անցնում է 100-ից:



համայնքը ջրի տեսուչից (ջրի վճարների հավաքողից), 15 տոկոսը՝ հեռուստատեսությունից, 3 տոկոսը՝ համայնքի ղեկավարից, 1 տոկոսը՝ համացանցից, 1 տոկոսը՝ համայնքում փակցված հայտարարություններից, 0.3%-ը՝ ռադիոյից, 6 տոկոսը՝ այլ աղբյուրներից, և 12% -ն էլ նշել է, որ ընդհանրապես չի ստանում նման տեղեկատվություն:

Գծապատկեր 5. Համայնքում ջրային ոլորտում իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները



Քաղաքացիական ակտիվություն: Այս հետազոտությունը ցույց տվեց, որ Արարատյան դաշտի բնակիչների մեծ մասը (96% և ավելի) ակտիվորեն ներգրավված չեն ջրային ռեսուրսների կառավարման գործընթացներում, ոչ էլ նրանք համապատասխան տեղեկատվություն են ստացել կամ մասնակցել ջրային ռեսուրսների կառավարման վերաբերյալ դասընթացների: Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 12-ում ստորև, հարցվածների ընդամենը չորս տոկոսն է նշել, որ իրենք երբևէ մասնակցել են ջրային ռեսուրսների կառավարման, ջրօգտագործման, ջրի որակի/հասանելիության կամ ջրավազանային պլանավորման վերաբերյալ որևէ վերապատրաստման կամ քննարկման: Բնակչության ընդամենը 1.3 տոկոսն է ստացել է տեղեկատվություն (բրոշյուրների, հեռուստահաղորդումների, կամ ՋԼՄ-ների հրապարակումների միջոցով) ջրային ռեսուրսների կառավարման կամ արդյունավետ ջրօգտագործման վերաբերյալ:

Այդպիսի դասընթացներին տղամարդկանց մի փոքր ավելի մասն է մասնակցել, քան կանանց (5,6% ընդդեմ 3,1%-ի): Տարիքային տեսանկյունից, միջին և ավելի բարձր տարիքի անձինք ավելի շատ են մասնակցել, քան ավելի երիտասարդները:

Հարցվածներից ոչ ոք չի մասնակցել ջրային ռեսուրսների վերաբերյալ որևէ օրենսդրական նախաձեռնության, որոշումների ընդունման, քաղաքականության կամ ռազմավարության մշակման, ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում որևէ մոնիթորինգի, կամ ջրօգտագործման թույլտվության (ՋԹ) տրամադրման համար կազմակերպված հանրային լսումներին:


Աղյուսակ 12. Բնակիչների գիտելիքներն ու մասնակցությունը ջրային ռեսուրսների կառավարման, ջրօգտագործման, ջրի որակի/հասանելիության կամ ջրավազանային պլանավորման գործընթացներին

	Այո	Ոչ	Չգիտեմ
1. Մասնակցել էք արդյոք ջրային ռեսուրսների կառավարման, ջրօգտագործման, ջրի որակի/մատչելիության, ջրավազանային պլանավորման վերաբերյալ որևէ դասընթացի/ քննարկման:	16 (4.2%)	367 (95.3%)	2 (0.5%)
2. Մասնակցել էք արդյոք ջրային ռեսուրսների վերաբերյալ որևէ օրենսդրական նախաձեռնության, որոշումների ընդունման, քաղաքականության կամ ռազմավարության մշակման:	0 (0%)	384 (99.7%)	1 (0.3%)
3. Մասնակցել էք արդյոք որևէ մոնիթորինգի ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում:	0 (0%)	383 (99.5%)	2 (0.5%)
4. Երբևէ մասնակցել էք արդյոք ջրօգտագործման թույլտվության (ՋԹ) տրամադրման համար կազմակերպված հանրային լսումների:	0 (0%)	383 (99.5%)	2 (0.5%)
5. Ստացել էք արդյոք որևէ տեղեկատվություն (բրոշյուրներ, հեռուստահաղորդում, մամուլի հոդվածներ) ջրային ռեսուրսների կառավարման կամ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման վերաբերյալ:	5 (1.3%)	378 (98.2%)	2 (0.5%)



Բնակիչների ճնշող մեծամասնությունը (69%) նշել է, որ իրենք կմասնակցեն իրենց համայնքում խմելու կամ ոռոգման ջրի հետ կապված քննարկումներին, եթե նման քննարկումներ անցկացվեն: Հարկ է նշել, որ տղամարդիկ (պայմանավորված մշակութային նորմերով) ավելի ակտիվ են այս հարցում: Տղամարդկանց 80%-ն են դրական պատասխանել այս հարցին, իսկ կանանց՝ 61%-ը: Ինչպես նախորդ հարցի դեպքում, միջին և ավելի բարձր տարիքի մարդիկ ավելի մեծ ցանկություն են հայտնել մասնակցելու այդ քննարկումներին, քան ավելի երիտասարդները:

Գծապատկեր 6. <<Եթե ջրային ոլորտի պատասխանատուները Ձեր համայնքում կազմակերպեն հանդիպում բնակիչների հետ՝ քննարկելու համար խմելու և/կամ ոռոգման ջրի հետ կապված խնդիրները, Նուք կմասնակցե՞ք այդ հանդիպմանը>>



Այսպիսով, հաշվի առնելով Արարատյան դաշտում ջրային ռեսուրսների հետ կապված մեծ բնապահպանական և սոցիալական խնդիրները, ակնհայտ է, որ անհրաժեշտություն կա բնակիչների համար իրականացնելու հատուկ դասընթացներ, որպեսզի բարձրացվի նրանց իրազեկվածությունը ջրային ռեսուրսների կառավարման, արդյունավետ ջրօգտագործման, ջրային ռեսուրսների որակի/հասանելիության, և ջրավազանային պլանավորման վերաբերյալ: Բնակիչներին պետք է խրախուսել և լիազորել (համապատասխան օրենքների/կանոնակարգերի միջոցով) որպեսզի առավել ակտիվորեն մասնակցեն ջրօգտագործման թույլտվությունների վերաբերյալ հանրային լսումներին, ջրային ռեսուրսների կառավարման մոնիտորինգային գործունեությանը, ինչպես նաև ջրային ռեսուրսների վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությունների, որոշումների ընդունման, քաղաքականության կամ ռազմավարության մշակման գործընթացներին:




1.6 SS-ների սոցիալ-տնտեսական կարգավիճակն ու ժողովրդագրական բնութագիրը

SS կազմը: Հարցված տնային տնտեսություններում ապրող անձանց միջին թիվը եղել է 1-ից 12-մարդ, միջինը՝ 4,6 մարդ (4,7 գյուղական և 4.2 քաղաքային բնակավայրերում): Չափահաս տղամարդկանց միջին թիվը տնային տնտեսություններում եղել է 1.6, իսկ չափահաս կանանց միջին թիվը՝ 1.8.

Կրթություն և տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու հմտություններ: Ինչպես երևում է ստորև Գծապատկեր 7-ում, հարցվողների կեսը կամ քիչ ավելին (60%-ը գյուղական և 48%-ը քաղաքային համայնքներում) ունեն միջնակարգ, թերի միջնակարգ կամ տարրական կրթություն, 23%-ը գյուղական և 15%-ը քաղաքային համայնքներում ունեն միջնակարգ մասնագիտական կրթություն, և ընդամենը 16.7%-ը գյուղական և կրկնակի անգամ ավելի՝ 36.5%-ը քաղաքային համայնքներում ունեն բարձրագույն կամ թերի բարձրագույն կրթություն:

Գծապատկեր 7. Հարցվողների կրթությունը (% ըստ բնակավայրի տեսակի)




Գծապատկեր 8-ում էլ երևում է, որ 18-25 տարեկանների 32%-ը, 26-35 տարեկանների 33%-ը, և 66-75 տարեկանների 35%-ն ունեն բարձրագույն կամ թերի բարձրագույն կրթություն, մինչդեռ այլ տարիքային խմբերում ավելի ցածր են այդ տոկոսները (ամենացածրը 46-55 տարիքային խմբում է՝ 14%): Մյուս կողմից էլ երևում է, որ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողներն ավելի շատ են միջին տարիքային խմբերում: Սրանք այն մարդիկ են, որոնք կրթվել են՝ աշխատելու համար նախկին խորհրդային տնտեսությունում (որտեղ այդպիսի կադրերի կարիքն անհամեմատաբար մեծ



եր): Գենդերային տեսանկյունից էական տարբերություններ չկան տղամարդկանց և կանանց կրթամակարդակներում:

Գծապատկեր 8. Հարցվողների կրթությունը (% տարիքային խմբերում)



Տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու հմտությունների առումով, Արարատյան դաշտի հարցվածները նույնպես նման պատկեր ունեն. գյուղական բնակավայրերում մեծահասակների 67 տոկոսը և քաղաքային բնակավայրերում մեծահասակների 49 տոկոսը բացարձակապես ոչ մի (գրոյական) հմտություն **չունեն էլեկտրոնային նամակ գրելու**: Երրիտասարդները (18-25 տ.) 4-5 անգամ ավել հմտություններ ունեն, քան միջին տարիք ունեցողները և տարեցները: Մինչ դեռ 76 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց 100% -ը, 66-75 տարեկան մարդկանց 92% -ը, 56-65 տարեկան մարդկանց 76% -ը, 46-55 տարեկանների 78% -ը, էլեկտրոնային նամակ գրելու հմտություններ չունեն, 18-25 տարեկան երիտասարդների շրջանում այդ մասնաբաժինը կազմում է 18% և 26-35 տարիքային խմբում՝ 35% (այդպիսով, որքան բարձր է տարիքը, այնքան բարձր է SS անգրագիտությունը):

Ինտերնետից օգտվելու, ներառյալ տեղեկություններ որոնելու հմտությունը նույնպես կախված է բնակավայրի տիպից և տարիքից. գյուղական վայրերում ապրող չափահասների 49 տոկոսը և քաղաքային վայրերում ապրող չափահասների 37 տոկոսը բոլորովին չեն կարողանում տեղեկություններ որոնել համացանցում: Ինտերնետային գրագիտության մակարդակը 18-25 տարեկանների մոտ 10 անգամ գերազանցում է տարեցներից: Եթե ինտերնետից օգտվել չկարողացողների տոկոսը 18-25 տարեկանների մոտ 7% է, ապա 26-35 տարեկանների մոտ՝ 17%, 36-45 տարեկանների մոտ՝ 23%, 46-55 տարեկանների մոտ՝ 59%, 56-65 տարեկանների մոտ՝ 66%, 66-75 տարեկանների մոտ՝ 77%, իսկ 76-ից բարձր տարիքի մարդկանց մոտ գրեթե 100 տոկոսի է հասնում:



Բջջային հեռախոսի հավելվածներից օգտվելու բնակիչների հմտությունները նույնպես տարբեր են՝ կախված բնակավայրի տիպից և մարդկանց տարիքից (գենդերային տեսանկյունից չկա էական տարբերություն): Գյուղական վայրերում ապրող չափահասների 59 տոկոսը և քաղաքային վայրերում ապրող չափահասների 51 տոկոսը բոլորովին չեն կարողանում օգտվել բջջային հեռախոսի հավելվածներից: Մինչ 18-25 տարեկանների 21, իսկ 26-35 տարեկանների 22 տոկոսը չեն կարողանում օգտվել բջջային հեռախոսի հավելվածներից, այդ տոկոսները զգալիորեն բարձր են ավելի բարձր տարիքային խմբերի մոտ՝ 36-45 տարեկանների մոտ 36%, 73%՝ 46-55, 79%՝ 56-65, և 92%՝ 66-75 տարեկանների մոտ:


Հարցվողների զբաղվածության կարգավիճակը: Քաղաքային վայրերում ապրող չափահասների բավականին մեծ մասը՝ 44 տոկոսը չեն աշխատում, 12 տոկոսը ինքնազբաղվածներ են, և միայն 29 տոկոսն են աշխատում որևէ գործատուի մոտ: Գյուղական վայրերում ապրող չափահասների անհամեմատ ավելի փոքր մասը՝ 27 տոկոսը չեն աշխատում: Սա թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ գյուղաբնակների զգալի մասը՝ 42 տոկոսը, զբաղված է գյուղատնտեսությամբ: 5 տոկոսն ինքնազբաղվածներ են այլ ոլորտներում (արհեստ, առևտուր), և միայն 18 տոկոսն են աշխատում որևէ գործատուի մոտ:

SS-ների տնտեսական պայմանները: Այսպես, քաղաքային վայրերում ապրող չափահասների 49 տոկոսը և գյուղական վայրերում ապրող չափահասների 42 տոկոսը նշել են, որ իրենց SS եկամուտը բավականացնում է սնունդ և հագուստ գնելու համար, բայց այն բավարար չէ երկարատև օգտագործման թանկարժեք իրեր, օրինակ հեռուստացույց, կամ լվացքի մեքենա, գնելու համար: Նրանք շատ հաճախ բանկերից վարկ են վերցնում այդպիսի գնումներ կատարելիս: Բնակչության մյուս, մի փոքր ավելի քիչ մասը (քաղաքաբնակների 21 իսկ գյուղաբնակների 31 տոկոսը) նշել են, որ իրենց SS եկամուտը բավականացնում է սնունդ, բայց ոչ հագուստ գնելու համար: Քաղաքաբնակների 11 իսկ գյուղաբնակների 14 տոկոսի համար նույնիսկ սնունդ գնելն է խնդիր, քանի որ գումարը չի բավականացնում:

Հետազոտված գյուղական համայնքներում SS-ների 35 տոկոսը նշել է, որ իրենց տարեկան եկամուտը կազմում է 1 մլն ՀՀ դրամից քիչ, 44 տոկոսը՝ 1-2 մլն ՀՀ դրամ, մինչդեռ քաղաքային համայնքներում այդ տոկոսները համապատասխանաբար կազմում են 45 և 34 տոկոս: Այսինքն, քաղաքային բնակավայրերում SS-ներն ավելի ցածր եկամուտ են ստանում, որը կապված է հող չունենալու/չմշակելու կամ քաղաքներում աշխատատեղերի սղության հետ: Պետք է նաև նկատի ունենալ, որ ֆինանսական և տնտեսական պայմանների հարցերին սովորաբար այնքան էլ ազնիվ չեն պատասխանում մարդիկ (տարբեր մտավախություններով), այդ իսկ պատճառով շատ դժվար կամ նույնիսկ անհնար է ստանալ այդպիսի հարցերի մասին հավաստի տվյալներ:



Գծապատկեր 9. SS-ների տարեկան ֆինանսական եկամուտը (% բնակավայրերի տեսակից)



Արժե նաև նշել, որ դրական կապ է հայտնաբերվել SS եկամտի և ռոռզման ջրի հասանելիության մեջ: Եթե տարեկան մինչև 1 մլն ՀՀ դրամ եկամուտ ունեցող SS-ների 51 տոկոսն է նշել, որ նրանք միշտ կամ հիմնականում ստանում են բավարար քանակի ռոռզման ջուր, ապա այդպիսի SS-ների կշիռը 1-2 մլն դրամ եկամտային խմբում կազմում է 60 տոկոս, իսկ 2 մլն դրամից ավելի եկամուտ ունեցող SS-ների 76 տոկոսն են նշել, որ ռոռզման ջրի խնդիր չունեն: Ստացվում է, որ ինչքան ավելի մեծ է SS-ներին հասանելի ռոռզման ջուրը, այնքան ավելի մեծ եկամուտ են նրանք ստանում:

1.7 Ամփոփում

Արարատյան դաշտի քաղաքային և գյուղական բնակավայրերի բնակիչների այս հետազոտությունը պարզել է հետևյալը.

- ✓ Թեև Արարատյան դաշտում քաղաքային բնակավայրերի բնակչության 88 և գյուղական բնակավայրերի բնակչության 85 տոկոսը խմելու ջուր ստանում են տան կամ բակի ծորակից, նրանց գրեթե կեսը գոհ չի այդ ջրի որակից, և շատերը (հնարավորության դեպքում) ջուրը գնում են խանութից, կամ բերում են այլ համայնքներից, և նույնիսկ՝ Երևանից:
- ✓ Խմելու ջրի <<վատ>> որակից բացի, Արարատյան դաշտի բնակավայրերի մեծամասնությունը չունի մշտական (օրական 24 ժամ) խմելու ջրի մատակարարում: Կան բազմաթիվ բնակավայրեր, որոնք օրը մի քանի ժամ կամ երկու օրը մեկ անգամ են ստանում խմելու ջուր: Թեև շատ SS-ներ կարծես թե բավարարված են ընդհատումներով մատակարարվող խմելու ջրից (շատերը նշել



են, որ նախկինում նույնիսկ ավելի քիչ են ջուր ստացել), հարկ է նշել, որ ջրամատակարարման ընդհատումները մեծացնում են ջրի աղտոտման ռիսկերը՝ քայքայված խողովակների մեջ բացասական ճնշման պատճառով, որը ներծծում է շրջապատի մանրէները:

- ✓ Չնայած սեզոնային տատանումներին, Արարատյան դաշտի ֆերմերների 41 (\pm 5%) տոկոսը հաճախ է հանդիպում (հատկապես ամռանը) ժամանակին ոռոգման ջուր ստանալու խնդիրների: Բնակիչները հիմնականում բացատրում են ջրի առկայության խնդիրները տարածաշրջանում ջրի սակավության հետ:
- ✓ Արարատյան դաշտում չկա ջրային ռեսուրսների օգտագործման պատշաճ կառավարում և վերահսկողություն (ինչպես խմելու ջրի, այնպես էլ ոռոգման ջրի, կամ ձկնաբուծության կողմից օգտագործվող արտեզյան ջրերի համար).
 - Արարատյան դաշտում SS-ների զգալի մասը (մոտ 23%) չունի խմելու ջրի ջրաչափեր:
 - Ոռոգման ջրի համար բնակիչները վճարումներ են կատարում ՋՕԸ-երին, որոնց գործունեությունը (ներառյալ հավաքագրվող վճարումները) պետական կամ այլ մարմինների կողմից չեն վերահսկվում՝ ստեղծելով կոռուպցիայի և բնակիչներին ջրի անարդար բաշխման համար խոշոր ռիսկեր: ՋՕԸ-երը հաճախ չեն կարողանում ջուր տալ ֆերմերներին այն ժամանակ, երբ ջրի կարիքը (հատկապես ամռանը) առավել մեծ է լինում: Իսկ ոռոգման ջրի սակագինը շատ ֆերմերների համար անմատչելի է: Այսպիսով, բնակչության 59 տոկոսը դժգոհություն է հայտնել իրենց համայնքում ՋՕԸ-երի գործունեությունից:
 - SS-ների 35 տոկոսը կարծում է, որ պետությունը պետք է վերահսկի բոլոր ջրօգտագործողներին, անկախ նրանց դիրքից/կարգավիճակից;
 - Բնակիչների 65 տոկոսը կարծում է, որ պետությունը պետք է ուժեղացնի վերահսկողությունը հատկապես ձկնաբուծության ոլորտում:
- ✓ SS-ների 70 տոկոսը կամ ծանոթ չեն ջրօգտագործողների իրավունքների և պարտականությունների հետ, կամ նրանք չունեն ջրամատակարարման այդպիսի պայմանագիր: Այս հանգամանքը նրանց անգոր է դարձնում իրենց իրավունքների համար պայքարելու գործում:
- ✓ Բնակչության միայն 38 տոկոսն է տեղեկացված, որ Արարատյան դաշտի արտեզյան ավազանի ջրերի ներկայիս մակարդակը բավականին նվազել է, և միայն 60 տոկոսն է հասկանում, որ արտեզյան ջրերի անխնա օգտագործումը կարող է հանգեցնել էկոլոգիական աղետի:



- ✓ Դեռևս շատ ցածր է Արարատյան դաշտում ոռոգման ջրի խնայող տեխնոլոգիաների, ինչպիսիք են կաթիլային ոռոգումը, օգտագործման տոկոսը՝ 2%: Բնակչության 37 տոկոսը չի էլ ցանկանում կիրառել կաթիլային ոռոգում (հիմնականում դրանց անմատչելիության կամ տեղեկատվության պակասի պատճառով), իսկ մնացածը կցանկանա ձեռք բերել ու տեղադրել կաթիլային ոռոգման համակարգեր, եթե դրանք մատչելի լինեն և/կամ սուբսիդավորվեն պետության կողմից:
- ✓ Այս հետազոտությունը ցույց տվեց, որ համայնքների բնակիչները ջրի հետ կապված խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն ավելի շատ ստանում են համայնքի բնակիչներից և ջրի տեսուչից, քան հեռուստատեսությունից, ռադիոից կամ համացանցից: Մի զգալի մասն էլ ընդհանրապես չի տեղեկացվում այդ մասին:
- ✓ Այս հետազոտությունը նաև ցույց տվեց, որ Արարատյան դաշտի բնակիչների գերակշիռ մասը ջրային ռեսուրսների կառավարման գործընթացներում ակտիվորեն ներգրավված չեն, և չեն ստացել նման տեղեկատվություն ու չեն մասնակցել համապատասխան քննարկումների կամ դասընթացների:

1.8 Առաջարկություններ

1. Հաշվի առնելով Արարատյան դաշտի խմելու ջրի որակի հետ կապված բնակչության դժգոհությունը (SS-ների 40-45%), առաջարկվել էր, որ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեն (Ջրտնտպետկոմ) դիտարկի Արարատյան դաշտի բնակիչների համար խմելու ջրի այլընտրանքային աղբյուրների ապահովումը, որտեղ արտեզյան ջրի որակը նվազել է: 2017թ. հունիսի 14-ին, առաջատար սոցիոլոգի հարցազրույցի ժամանակ, Ջրտնտպետկոմ-ի փոխնախագահը նշել է, որ հնարավորություն կա ապահովել Արարատյան դաշտի բնակիչներին խմելու բորձրորակ ջրով (մոտ 100 լ/վ) Գյումրիից (Ղազանչի աղբյուրից), սակայն դրա կառուցումը կարժենա մոտավոր 35-40 մլն. ԱՄՆ դոլլար, որի համար ֆինանսավորման աղբյուրներ դեռևս չեն հայտնաբերվել:
2. ՀՀ առողջապահական նախարարության առողջապահական պետական տեսչությունը պետք է իրականացնի երկրի բոլոր բնակավայրերում բնակչությանը տրամադրվող խմելու ջրի որակի կանոնավոր (ամենամսյա) ստուգումներ:
3. Խմելու ջրի մատակարարման համակարգի կորուստները չափազանց բարձր են Հայաստանում (70-80%): Մինչ դեռ դրա մի մասը համարվում է «տեխնիկական կորուստ», շատերը, որոնք չունեն ջրաչափեր և/կամ ջրի դիմաց վճարներ չեն



կատարում, ապօրինի են այն օգտագործում և նույնիսկ խմելու ջուրը օգտագործում են իրենց տարածքները ոռոգելու նպատակով: Ձկնաբուծարանները Արարատյան դաշտում գտնվող արտեզյան ջրի թիվ մեկ սպառողն է, և պետական մարմինները դեռևս չեն կարողացել լիովին վերահսկել ջրօգտագործման մակարդակը և ապահովել դրանց համապատասխանությունը ջրօգտագործման թույլտվության (ՋԹ) պայմաններին: Հաշվի առնելով այն փաստը, որ ապօրինի ջրօգտագործողների մեծ մասը բարձրաստիճան պաշտոնյաներ / օլիգարխներն են, չափազանց կարևոր է հզորացնել բնապահպանության նախարարությանը (ուստիկանության հետ ստեղծելով աշխատանքային խմբեր) բոլոր խոշոր ջրօգտագործողների շրջանում պարտադիր ստուգումներ իրականացնել՝ բացահայտելու ՋԹ-ների համապատասխանությունը կամ հնարավոր բացակայությունը:

4. ՋՕԸ-ների ինստիտուտը պետք է վերանայվի՝
 - ա) տնօրենի ընտրությունը պետք է լինի ավելի թափանցիկ և մրցունակ
 - բ) կանխիկ վճարումները պետք է ամբողջովին բացառվեն՝ ՋՕԸ-րի կողմից միջոցների չարաշահումից խուսափելու համար
 - գ) պետք է լինի ֆերմերների ջրի բաշխման խելացի և թափանցիկ համակարգ – առցանց համակարգերը պետք է ուսումնասիրվի և օգտագործվի բնակիչների համար ջրի ավելի արդյունավետ բաշխման նպատակով՝ իրենց էլեկտրոնային հարցումների հիման վրա
 - դ) պետք է վերանայել ոռոգման ջրի սակագները և անհատ ֆերմերների կողմից օգտագործվող ջրի ծավալների գնահատման սկզբունքները. ջրաչափերը պետք է օգտագործվեն հաշվարկելու (ոչ մոտավոր) յուրաքանչյուր ոռոգման ժամանակ տրամադրվող ջրի ծավալը, և սակագները պետք է վերանայվեն, որպեսզի ավելի մատչելի լինեն՝ դրանով իսկ նվազեցնելով գյուղատնտեսական արտադրանքի արժեքը և միջազգային շուկայում հայկական մրգերի և բանջարեղենի մրցունակության բարձրացումը:
5. Ջրօգտագործողների իրավունքների և պարտականությունների մասին բնակչության իրազեկության մակարդակը պետք է բարձրացվի, որպեսզի նրանք կարողանան պաշտպանել իրենց իրավունքները՝ ՋՕԸ-երի, «Վեոլիայի» ջրամատակարարման գործակալությունների և ՏԻՄ-երի հետ կապված խնդիրները լուծելիս:
6. Պետությունը պետք է խթանի ջրի երկրորդային օգտագործման համար շինարարական համակարգերում ներդրումները (ձկնաբուծարաններից մինչև գյուղատնտեսություն), ինչպես փորձարկվել է Հայանիստ գյուղում ՄԱԿ-ի ՋԾ ԳԷՀ ՓԴԾ-ի և ԱՄՆ ՄԶԳ ԳԱՏՕ-ի կողմից:



7. Ջրի պահպանման տեխնոլոգիաները ինչպիսիք են կաթիլային ոռոգումը, աքուապոնիկան և հիդրոպոնիկան պետք է սուբսիդավորվեն (պետության կամ դոնոր կազմակերպությունների կողմից) և լինեն հասանելի ֆերմերների համար: Ֆերմերները պետք է ստանան համապատասխան դասընթացներ և հրահանգներ, ինչպես նաև տեխնիկական օգնություն նման համակարգերի ստեղծման հարցում, և վերջապես
8. Հաշվի առնելով բնակչության ցածր իրազեկվածությունը ջրային հարցերի վերաբերյալ և որոշումների կայացման գործընթացում իրենց մասնակցության ցածր մակարդակը, կարևոր է, որ տեղի բնակիչները վերապատրաստվեն, աջակցություն ստանան և խրախուսվեն մասնակցել որոշումների կայացման գործընթացներին կապված ջրային ռեսուրսների կառավարման հետ:

Հղումներ

1. Դեպի ինտեգրված ջրային ռեսուրսների կառավարում Հայաստանում, Համաշխարհային բանկ, 2015
2. Արարատյան դաշտավայրի ստորերկրյա ջրերի ռեսուրսների գնահատում, ԱՄՆ ՄՁԳ «Մաքուր էներգիա եվ ջուր» ծրագիր, Վերջնական զեկույց, 2014



Մաս 2. Ջրային ոլորտի շահառուների և փորձագետների շրջանում անցկացված խորին հարցազրույցների արդյունքները

Ջրօգտագործման պրակտիկայի և ջրային ռեսուրսների կառավարման ու քաղաքականության վերաբերյալ նախնական քանակական հետազոտության (տնային տնտեսությունների հետազոտությունների) արդյունքները լրացնելու և ավելի խորը տեղեկատվություն ստանալու նպատակով փորձագետների և շահագրգիռ կողմերի միջև անցկացվել են մի շարք խորացված հարցազրույցներ (ՀՀ կառավարության, միջազգային, դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, ՋԼՄ-ների, հետազոտական/խորհրդատվական ընկերությունների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների շրջանում): Հարցազրույցների մասնակիցների ամբողջական ցանկը ներկայացված է Հավելված 1-ում: Հարցազրույցներն անցկացվել են 2017 թ հունիսի 12-ից 22-ը ընկած ժամանակահատվածում:

Հարցազրույցների մասնակիցներն ընտրվել են <<Ազգային ջրային համագործակցություն>> գիտական, բնապահպանական ՀԿ-ի, ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի, ԱՄՆ ՄԶԳ ԳՍՏՕ ծրագրի աշխատակիցների և այլ փորձագետների առաջարկությունների հիման վրա: Խորացված հարցազրույցի ուղեցույցը մշակվել է ծրագրի գլխավոր վերլուծաբանի (սոցիոլոգի) կողմից, և այն վերջնականացվել է վերը նշված փորձագետների հետ քննարկումների հիման վրա : Ուղեցույցը պարունակում էր 19 հարց՝ ջրօգտագործման, խմելու և ոռոգման ջրերի որակի և հասանելիության, ջրային ռեսուրսների կառավարման և համապատասխան քաղաքականության մասին, ինչպես նաև տեղեկատվություն համապատասխան կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի և ազգային ջրային քաղաքականության վրա այդ կազմակերպությունների ունեցած ազդեցության մասին: Ուղեցույցը նաև ներառում էր գրուցավարի հրահանգներ և լրացուցիչ հարցերի տարբերակներ: Չնայած հարցվողները տեղեկացված էին իրենց տրամադրած պատասխանների գաղտնիության մասին, սակայն նրանց կեսը հրաժարվել է հարցազրույցի ընթացքում ձայնագրիչի կիրառումից, և հարցազրուցավարը գրավոր ձևով է արձանագրել հարցազրույցի բովանդակությունը: Հարկ է նաև նշել, որ ոչ բոլոր հարցերն են ուղղվել բոլոր հարցվածներին, քանի որ որոշ հարցեր չեն համապատասխանել որոշակի հարցվողների տեսակին, և որոշ հարցվողներ պարզապես հրաժարվել են պատասխանել որոշ հարցերի: Այդ իսկ պատճառով, սույն հաշվետվության 2.2 կետում նշված որոշ հարցերի պատասխանները բացակայում են (հարցվողների թվից՝ 18-ից քիչ են):



2.1 Անփոփագիր

Այս հետազոտության ընթացքում հարցված գրեթե բոլոր փորձագետներն ու շահագրգիռ կողմերը (նույնիսկ պետական պաշտոնյաները) համակարծիք են, որ Հայաստանում (մասնավորապես՝ Արարատյան դաշտում) ջրային ռեսուրսների կառավարումը արդյունավետորեն չի իրականացվում: Չնայած երկրի ջրային ռեսուրսների գերօգտագործումը հատկապես տեղի է ունենում տնտեսական/էներգետիկ ճգնաժամի պայմաններում (ջուրն ավելի շատ է օգտագործվում ՀԷԿ-երի միջոցով էլեկտրաէներգիա ստանալու համար, երբ երկիրը կանգնած է էներգետիկ ճգնաժամի առաջ, երբ չկան համապատասխան քանակի էներգակիրներ), կամ երբ քիչ են այլընտրանքային էներգիայի աղբյուրներով աշխատող էլեկտրակայանները, երբ տեղումների ցածր մակարդակ է լինում տարվա ընթացքում, կամ, երբ հարկ է լինում խթանել տնտեսության զարգացումը՝ ջրային ռեսուրսների գերշահագործմամբ (օրինակ՝ ինչպես եղավ Արարատյան դաշտի ձկնարդյունաբերության ոլորտում, երբ հարյուրավոր ձկնաբուծարաններ ստեղծվեցին՝ ձուկ արտադրելու և արտահանելու նպատակով):

Չնայած տնտեսության կարիքներին, հարկ է չմոռանալ բնության, և մասնավորապես ջրային ռեսուրսների պահպանության մասին: Որքան էլ որ Սևանա լիճն ու Արարատյան դաշտի արտեզյան ավազանի ջրային ռեսուրսները հարուստ լինեն, դրանք անսահմանափակ չեն և ինքնավերականգնման համար էլ շատ երկար տարիներ են պետք: Այդ ջրային ռեսուրսների անխնա օգտագործումը վերջին 10-15 տարիների ընթացքում արդեն իսկ բերել են լուրջ բնապահպանական աղետի: Իջել է Արարատյան դաշտի արտեզյան ավազանի մակարդակը, անդառնալիորեն փոխվել է վերջինիս քիմիական կազմը և շատ վայրերում այն այլևս պիտանի չի խմելու համար:

Չնայած բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ կան այս ոլորտում, այս հետազոտության ընթացքում Արարատյան դաշտավայրի արտեզյան ջրավազանի հետ կապված հարցերը հետազոտվել են ոչ թե գիտական (երկրաբանական) տեսանկյունից, այլ այնպես, ինչպես այդ խնդիրներն ընկալվում են տարբեր փորձագետների, շահագրգիռ կողմերի և բնակչության կողմից:

Փորձագետներն ու շահագրգիռ կողմերի մեծամասնությունը միակարծիք են, որ վերջին 10-15 տարիներին Արարատյան դաշտի արտեզյան ջրավազանի ջրերի գերօգտագործում է եղել, և որ արտեզյան ջրերի մակարդակը և դրանց ճնշումը շատ վայրերում զգալիորեն նվազել է: Կոռոզիայի են ենթարկվել ու աղակալել են այդ տարածքի հողերը, որն ազդել է և շարունակում է ազդել Արարատի և Արմավիրի մարզերի գյուղատնտեսության, հետևաբար նաև բնակչության եկամուտների վրա:

Թեև փորձագետներն ու շահագրգիռ կողմերը հասկանում են, որ Արարատյան դաշտի արտեզյան ջրային ռեսուրսների գերօգտագործումը հիմնականում պետական



(բնապահպանական) իշխանությունների անհետևողական աշխատանքի և թույլ վերահսկողության արդյունք է (պայմանավորված նաև կոռուպցիայով), հասարակ բնակիչներն ու միջազգային, մասնավոր, քաղաքացիական հասարակության և այլ կառույցներն այնքան ակտիվ կամ ունակ չեն եղել այդ խնդիրների դեմ պայքարելու հարցում: Չնայած կան որոշ հասարակական/բնապահպանական և լրատվական կազմակերպություններ («Հայկական բնապահպանական ճակատ», «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ, «Հետք» առցանց օրաթերթ, և այլն), որոնք անաչառ պայքար են տարել/տանում այս ոլորտում, սակայն նրանց ձայնը ոչ միշտ է լսելի պետական կառավարման մարմինների կողմից: Բացի այդ, հաճախ քաղաքականության մեջ առաջնորդվում են ելնելով տնտեսության կարճաժամկետ առաջնահերթություններից, կամ առանձին/մասնավոր շահերից (պետական/քաղաքական որոշ գործիչների կոռումպացվածության պատճառով), և դրա հետևանքով հաճախ երկրում անտեսվում են բնապահպանական խնդիրները:

Երկրի ջրային ռեսուրսներին (ներառյալ Արարատյան արտեզյան ավազանին) պատճառվող հետագա վնասները կանխելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Բոլոր խոշոր ջրօգտագործողների, այդ թվում՝ ձկնաբուծական տնտեսությունների նկատմամբ պետական վերահսկողության խստացում, նրանց պարտադրելով տեղադրել առցանց ջրաչափեր (SCADA)՝ համոզվելու համար, որ նրանք ջրառը կատարում են ըստ իրենց ՋԹ-ներում ամրագրված ծավալների:
- Քաղաքացիական հասարակության ներգրավում նշված վերահսկողության/մոնիտորինգի գործունեության մեջ՝ այս ոլորտում ավելի թափանցիկ և արդյունավետ վերահսկողություն ապահովելու համար:
- Խմելու ջրի մատակարարման և ոռոգման համակարգերում հսկայական կորուստների պատճառների ուսումնասիրում անկողմնակալ/չեզոք կազմակերպությունների (օրինակ՝ ՄՄԿ-ի կամ այլ միջազգային կազմակերպությունների կողմից), և այդ կորուստները հայտնաբերելու և կրճատելու նպատակով համապատասխան միջոցառումների իրականացում (քաղաքացիական հասարակության ներգրավմամբ):
- Արարատյան արտեզյան ավազանում բոլոր խորքային հորերի գույքագրում, ֆիզիկական վիճակի ու ջրառի ծավալների ստուգում ըստ համապատասխան ՋԹ-ների, ապօրինի հորերի հայտնաբերում և կոնսերվացում պետական կառույցների կողմից՝ քաղաքացիական հասարակության (որպես անկախ դիտորդների) ներգրավմամբ:
- Արարատյան դաշտի ձկնաբուծարանների հարակից տարածքներում ոռոգման ջրանցքների և դրենաժային համակարգի վերանորոգում:



- Ֆերմերներին ոռոգման ջրի տրամադրման առավել արդյունավետ համակարգի ստեղծում՝ առցանց համակարգ, որն առավել թափանցիկ է գործում, որտեղ ֆերմերների ջրօգտագործման պահանջները և նրանց ոռոգման ջրի տրամադրման տվյալները հասանելի են բոլորին; և որտեղ ոռոգման ջրի սակագները սահմանվում են այն սկզբունքով, որ ֆերմերներից ստացված վճարումները ծածկեն այդ համակարգի պահպանման ծախսերը, և ոչ մի դեպքում հավելյալ շահույթ չապահովեն ՋՕԸ-երին կամ նրանց հետ փոխկապակցված անհատներին:
- Ջրամբարների կառուցում և մեխանիկականից անցում ջրի ինքնահոս համակարգի՝ էլեկտրաէներգիայի խնայողության, ջրի սակագնի նվազեցման, և անձրևաջրերի ու հալոցքային ջրերի ամբարման նպատակով:
- Գյուղատնտեսության, և հատկապես ձկնաբուծության մեջ ջրի խնայողական տեխնոլոգիաների օգտագործման խթանում և սուբսիդավորում:
- Միջազգային/դոնոր կազմակերպությունների կողմից իրենց դրամաշնորհային/վարկային պայմանագրերի մեջ պետության կողմից ջրային ոլորտի օրենսդրական բարեփոխումների իրականացման և ջրային ռեսուրսների կառավարման ու վերահսկման համակարգի բարեփոխման վերաբերյալ նախապայմանների (նախքան այդ վարկերը տրամադրելը/ստանալը) ամրագրում:
- Ջրային ռեսուրսների կառավարման լավագույն միջազգային փորձի ուսումնասիրում և երկրում ներդրում:

Ջեկույցի հաջորդ գլուխը պարունակում է հարցազրույցի մասնակիցների կողմից հարցազրույցի ընթացքում տրված հարցերի հիմնական պատասխանները:



2.2 Հարցազրույցի մասնակիցների կողմից հարցազրույցի ընթացքում տրված հարցերի հիմնական պատասխանները

1. *Հարց. Ըստ Ձեզ որքա՞ն արդյունավետ են կառավարվում ջրային ռեսուրսները Արարատյան դաշտում, և ընդհանրապես Հայաստանում:*

Պատասխաններ

- ✓ Ոչ արդյունավետ: Ջրի արդյունահանումը չափից մեծ է, որը բացասաբար է ազդում ջրային ռեսուրսների վրա և բերում է հողերի աղակալման:
- ✓ Օրենսդրությունը / օրենքները լավ մշակված են, բայց դրանց իրականացումը և ենթաօրենսդրական ակտերը թերի են:
- ✓ Վերահսկողության մեխանիզմները պատշաճ կերպով չեն գործում: ՋՌԿԳ-ի կողմից պատշաճ ջրային ստուգումներ չեն իրականացվել 2015 թվականից ի վեր:
- ✓ Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման համար քաղաքական կամքը բացակայում է:
- ✓ Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կազմում առկա է աշխատակազմի բարձր հոսունություն և հմուտ մասնագետների պակաս՝ ցածր աշխատավարձերի պատճառով:
- ✓ Ջրային ռեսուրսների կառավարումը խիստ կենտրոնացված է: Թեև ջրավազանային կառավարման մարմիններ (ՋԿՄ) են ստեղծվել ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից, դրանք բավարար լիազորություններ չեն ստացել ինքնուրույն գործելու համար: Նախատեսում էր, որ ՋԿՄ-ները կտրամադրեն մարզերում ջրօգտագործման թույլտվություններ, սակայն դրանք ուղղակի հավաքում և Երևան են տեղափոխում համապատասխան փաստաթղթերը: Դա պայմանավորված է նրանց թույլ մասնագիտական ունակությունների և ՀՀ ԲՆ ՋՌԿԳ-ի ցանկությամբ՝ կենտրոնացնելու ՋԹ-ների տրամադրումը:
- ✓ Արարատյան դաշտում ձկնարդյունաբերության ոլորտում մեծ ստվերային տնտեսություն կա: Այն ազդեցիկ քաղաքական գործիչների (ֆինանսական օլիգարխիայի) ձեռքում է:
- ✓ Չնայած հիմա շատ ձկնաբուծարաններ փակվում են, սակայն շատ հորերից դեռևս ստորերկրյա ջրերը շարունակում են արտահոսել, քանի որ փակված չեն դրանք:
- ✓ Սոցիալական և էկոլոգիական ազդեցության առումով Հայաստանում ջրային ռեսուրսները թերի են կառավարվում: ՀՀ կառավարությունը ՋՌԿ ոլորտում որոշումների կայացման գործընթացներում չի ներգրավում բոլոր համապատասխան մարմիններին:
- ✓ Հանրային լուսմներ միշտ չէ, որ տեղի են ունենում (հատկապես, երբ որոշումներ են կայացվում հողամասերի կարգավիճակի վերաբերյալ), և համայնքների կարծիքները հաշվի չեն առնվում:
- ✓ Ջրի հետ կապված օրենսդրության մեջ հակասություններ կան:
- ✓ ՋՕԸ-երը խնդրահարույց են և դրանք գործում են բարձր կոռուպցիոն ռիսկերով:
- ✓ էկոլոգիական փորձաքննության եզրակացությունը դատարանի կողմից չի ընդունվում որպես վարչական ակտ:
- ✓ «Վեոլիա Ջուր» ջրամատակարարման ընկերությունը գործում է հակամրցակցային պայմաններում, այն պատշաճ կերպով չի իրականացնում ջրահեռացում, որն ազդում է բազմաթիվ համայնքներում սանիտարական վիճակի վրա: Հողի և ջրային ռեսուրսների աղտոտվածությունը մեծ խնդիր է դարձել: Թերի ջրահեռացման համակարգի պատճառով մոտ 30,000 քառ. մետր մակերեսով աղտոտված հողեր կան:



- ✓ Ջրային ռեսուրսները շատ վատ են կառավարվում: Չնայած այն բանին, որ Գառնի գյուղը հսկայական ջրային ռեսուրսներ ունի, որոնք տեղափոխվում են երկրի շատ մասեր, Գառնիի բնակիչները օրական ընդամենը երկու ժամ են խմելու ջուր ստանում:
- ✓ «Հետք» առցանց օրաթերթի լրագրողները պարզել են, որ մի բարձրաստիճան պաշտոնյա իր շուրջ 100 հա հասնող հսկա հողատարածքները ոռոգելու համար ապօրինի կերպով օգտագործում էր Գառնիից Երևան հոսող խմելու ջուրը: Այդ փաստը հրապարակելուց հետո, այդ ապօրինի ջրագիծը անմիջապես լիկվիդացվեց:
- ✓ Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների կառավարումը ճիշտ չի իրականացվում, սակայն այն ծրագրերը/գործողությունները, որոնք ներկայումս իրականացվում են (ներկայիս կառավարության ջրային ռազմավարության համաձայն), կբերեն վիճակի բարելավման, ջրի խնայողաբար օգտագործման, ջրի պատշաճ հաշվառման, կարգելվի նոր հորատանցքերի բացումը, և կխստացվի ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը:
- ✓ Ջրային ռեսուրսների վերաբերյալ որոշումներ կայացնելիս պետք է գերակա լինի պետական / ազգային մտածելակերպը: Կառավարությունը պետք է ավելի լավ համագործակցի դոնոր կազմակերպությունների հետ, համաֆինանսավորում կատարի անհրաժեշտության դեպքում և հետևի իր խոստումներին:
- ✓ Հայաստանում բնական ռեսուրսները շահագործվում են հանուն որոշ մարդկանց հարստացման: Չկա բնական, այդ թվում ջրային ռեսուրսների պատշաճ կառավարում: Համապատասխան օրենքներին չեն հետևում: Ես ծանոթ եմ ջրավազանային կառավարման ծրագրերին, բայց չեմ կարծում, որ դրանք կարող են իրականացվել: Դոնորները պետք է վերանայեն այն, թե ինչ են ֆինանսավորվում և ինչու: Ֆինանսավորման մոտեցումները պետք է վերանայվեն՝ դառնալու ավելի նպատակային և արդյունքների վրա ուղղված:
- ✓ Ջրային ռեսուրսները արդյունավետ կառավարվում են մեր տարածաշրջանում (Արարատ): Մենք ունենք անհատական ջրբաշխներ (մեխորատոր), ովքեր ոռոգման ջրի պահանջների ցանկ են կազմում, և բնակիչներին ոռոգման ջուր են տրամադրում պահանջը ստանալուց երեք օրվա ընթացքում: Վճարումները բացառապես կատարվում են փոստային բաժանմունքների միջոցով, տարին մի քանի անգամ: Կան բնակիչներ, որոնք մի քանի տարվա կուտակած պարտքեր ունեն ջրի դիմաց, սակայն մենք (ՋՕԸ) շարունակում ենք ջուր մատակարարել նրանց, հասկանալով վերջիններիս ծանր նյութական իրավիճակը: Կարծում եմ, մեր բնակիչների 90 տոկոսը բավարարված է մեր ՋՕԸ-ի ծառայություններից:
- ✓ Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը հնարավոր է, եթե բոլոր ջրօգտագործողները կիրառեն ջրաչափական սարքավորումներ:
- ✓ Ջրային ռեսուրսների կառավարումը երբեք արդյունավետ չի եղել Հայաստանում: 2014 թ.-ին ԲՆ-ն չեղյալ հայտարարեց բազմաթիվ ՋԹ-ներ և փակեց շատ անօրինական հորեր, սակայն ջրի խնայողության փոխարեն, ստորերկրյա ջրերի օգտագործման մակարդակը 20 տոկոսով ավելացավ դրանից հետո: Դա պայմանավորված էր ՋԿՄ-ների ներգրավմամբ, որոնք ձկնաբուծարաններին թույլ տվեցին (կաշառքի դիմաց) վերաբացել փակված հորերը: Բացի այդ, 2014 թ.-ին ՀՀ Կառավարությունը թույլ է տվել ապօրինի ջրօգտագործողներին ջրօգտագործման թույլտվություններ ստանալ (այսինքն, օրինականացվել) մինչև 2014 թվականի մայիս ամիսը, և նրանց, ովքեր այդ թույլտվությունները չստացան, պարտադրեցին լուծարվել և փակել հորերը: ՋԿՄ-ները այդ ժամանակաշրջանում նույնպես ապօրինի եկամուտներ վաստակեցին տրամադրելով հետին ամսաթվով ջրօգտագործման թույլտվություններ: Երրորդ, ՀՀ Կառավարությունը 2012թ.-ին փորձեց ձկնաբուծարաններում տեղական



արտադրության մեխանիկական ջրաչափեր տեղադրել, սակայն այդ ջրաչափերը շատ շուտով շարքից դուրս եկան՝ ջրի ֆիլտրերի բացակայության և դրանց վերանորոգում չիրականացնելու պատճառով: Արդյունքում, շատ ձկնաբուծարաններ վերսկսեցին ջրի արդյունահանումն առանց ջրաչափերի: Վերջերս պիլոտային ծրագրով (անվճար) 20 ձկնաբուծարաններում տեղադրվել են ավտոմատացված (առցանց) ջրաչափեր, սակայն մնացած ձկնաբուծարանները ստիպված կլինեն գնել այդպիսի ջրաչափերը, որը շատ թանկ կարժենա նրանց համար: Բացի այդ, բոլոր ձկնաբուծարաններին պարտադրել են տեղադրել և օգտագործել կիսափակ ջրօգտագործման տեխնոլոգիաներ առաջիկա 1.5 տարվա ընթացքում: Երրորդ, որոշում է ընդունվել ջրի սակագինը 0.5 դրամից 1 դրամ հասցնել 1 խմ-ի համար: Այս ամենը ֆինանսական դժվարություններ կառաջացնեն ձկնաբուծարանների շրջանում՝ ստիպելով նրանցից շատերին փակվել:

- ✓ Արարտյան դաշտում ջրային ռեսուրսների (մակերևութային, ստորերկրյա) կառավարման արդյունավետությունը բավական ցածր է, չնայած վերջին տարիներին միջազգային ծրագրերի և կառավարության կողմից ջանքեր են տարվում այդ ուղղությամբ: Ջրային ռեսուրսների թերի կառավարման արդյունքում Արարտյան դաշտում ի հայտ են եկել մի շարք լուրջ խնդիրներ, որոնք կարելի է դասել հետևյալ հիմնական և դրանցից բխող լրացուցիչ խնդիրների.
 - ջրօգտագործման ոչ ճիշտ կազմակերպում ու հսկողությունը, որի արդյունքում մի շարք համայնքներին չի բավականացնում մատակարարվող խմելու և ոռոգման ջրի քանակությունը: Ավելին, որոշ համայնքներում ընդհանրապես չկա ջրամատակարարում, իսկ որոշ տեղերում առկա են չօգտագործվող ինքնաշատրվանող հորեր:
 - 40-70% ոռոգման և 70-80% խմելու ջրակորուստները՝ խողովակաշարերի վատթար վիճակի և ջրագողության արդյունքում: Հարկ է նշել նաև, որ խոշոր ջրօգտագործողների կողմից ջրի դիմաց վճարների չկատարումը կամ բեռ է դառնում փոքր/համայնքային ջրօգտագործողների համար (ջրի ծախսից գոյացած գումարը բաժանվում և վերագրվում է փոքր ջրօգտագործողներին), կամ էլ դիտարկվում է որպես խոշոր չափերի հասնող ջրակորուստ:
 - Ջրահեռացման համակարգերի բացակայություն, որի արդյունքում համայնքների կոյուղաջրերը, ձկնաբուծարանների հետադարձ ջրերը և այլ ստիպի թափառող ջրեր չեն մնում ջրավազանում (թեկուզ և կեղտոտ վիճակով), այլ հոսում են հարևան Թուրքիա, արդյունքում՝ խախտվում է Արարտյան ջրավազանի ջրային հաշվեկշիռը:
 - Ջրային ռեսուրսների որակի փոփոխման և աղտոտման վերահսկման, կանխարգելման միջոցառումների բացակայություն, որի արդյունքում զգալի չափով նվազում է Արարտյան դաշտի ջրերի որակը. մակերևութային ջրերն աղտոտված են համայնքների կոյուղաջրերով, պինդ աղբով, իսկ Արարտյան արտեզյան ավազանի մակարդակի իջեցման արդյունքում որոշ խմելու ջրաղբյուրներ փոխել են իրենց որակական հատկանիշները և դարձել ոչ պիտանի խմելու նպատակով օգտագործման համար:
 - Խմելու և ոռոգման ջրերի բարձր սակագինը, և տարբեր համայնքներում ջրի վճարման տարբեր կարգերի կիրառում:



- Առկա դրենաժային համակարգերի ոչ ճիշտ սպասարկումը, և /կամ անհրաժեշտության վերանայման բացակայությունը:
- Ջրային ռեսուրսների ոչ ճիշտ կառավարումն ազդում է նաև այլ ոլորտների գործունեության վրա, օրինակ՝ գյուղատնտեսության զարգացման, հիդրոէներգետիկայի, և այլն:

2. Հարց. Ինչպե՞ս կարելի է հասնել Արարատյան արտեզյան ավազանի ջրային ռեսուրսների (ստորերկրյա և մակերևութային) առավել արդյունավետ կառավարմանը, որի արդյունքում կրավարարվեն բոլոր ջրօգտագործողների պահանջները՝ առանց վտանգելու ջրային էկոհամակարգերը:

Պատասխաններ

- ✓ Մենք (ԱԶԲ) մշակում ենք ջրի ծրագիր, որը նպատակ ունի փակել Արարատի և Արմավիրի մարզերում որքան հնարավոր է շատ ջրհորեր, և փոխարենը օգտագործել Կոտայքի և Արագածոտնի մարզերի ջրաղբյուրները: Դա կնվազեցնի էներգիայի սպառումը և կբարձրացնի արտեզյան ջրերի մակարդակը: Բացի դա, խորքային հորերում SCADA համակարգի կիրառումը թույլ կտա ավելի լավ կառավարել գոյություն ունեցող հորերը:
- ✓ Կառավարման տարբեր մարմիններում կառավարման գործառույթները պետք է հստակեցվեն և տարանջատվեն:
- ✓ Ստորերկրյա ջրերի սակագները պետք է բարձրացվեն՝ ստորերկրյա ջրերի արդյունահանումը նվազեցնելու համար: Շատ հորեր պետք է փակվեն:
- ✓ Հայաստանը չպետք է դառնա ձուկ արտադրող/արտահանող երկիր, քանի որ մենք չունենք համապատասխան քանակի ջրային ռեսուրսներ: Մենք չպետք է խթանենք ձկնաբուծության ընդլայնումը և ձկնարտադրության հետագա աճը: Եթե մենք սկսենք մեր խմելու ջուրը վաճառել հարևան Իրանին կամ արտահանենք այլ երկրներ, ապա դա մեզ շատ ավելի մեծ շահույթ կապահովի, քան այդ որակյալ ջուրը ձկնաբուծության մեջ վատնելը:
- ✓ Պետական ջրային ռեսուրսների կառավարման մարմինների մոնիտորինգի գործառույթը պետք է հզորացվի:
- ✓ Քաղաքականություն մշակողները պետք է մտահոգվեն երկրի կայուն զարգացման համար:
- ✓ Ջրի հետ կապված ենթաօրենսդրական ակտեր պետք է մշակվեն և արդյունավետ կերպով իրականացվեն:
- ✓ Պետական մարմինները պետք է ավելի մեծ պատասխանատվություն կրեն իրենց գործողությունների համար: Շատ հաճախ նրանց ոչ ոք պատասխանատվության կամ պատժի չի ենթարկում իրենց սխալ գործողությունների կամ որոշումների համար:
- ✓ Արարատյան դաշտում պետք է ապահովվի ջրի շրջանառու համակարգ: Ներկայումս ձկնաբուծության մեջ օգտագործված ջուրը կորչում է, արտահոսում է դեպի Թուրքիա:
- ✓ ՁԹ-ների տրամադրումը (արտեզյան ջրի արդյունահանման համար) պետք է սահմանափակվի և ավելի լավ կարգավորվի:
- ✓ ԶՕԸ-երը պետք է մշակեն և հետևեն որոշակի ժամանակացույցի՝ ջրօգտագործողներին ռոզման ջուր ապահովելու համար:



- ✓ Պետք է լինի թափանցիկ (առցանց) համակարգ, որտեղ ոռոգման ջուր օգտագործողները (ֆերմերները) կարող են գրավոր դիմումներ ներկայացնել ՋՕԸ-երին՝ ջուր ստանալու համար:
- ✓ ՋՕԸ-ները չպետք է կանխիկ գումար վերցնեն բնակիչներից՝ ջրամատակարարման համար (այդպիսի վճարումները պետք է բացառապես կատարվեն բանկային փոխանցումներով)՝ կոռուպցիոն ռիսկերից խուսափելու համար: ՋՏՊԿ-ի ներկայացուցիչները տեղեկացրել են, որ արդեն կա այսպիսի որոշում, սակայն որոշ մարդիկ դեռևս շարունակում են կանխիկ վճարումները ՋՕԸ-երին:
- ✓ Պետք է լինի թե՛ գծի ծառայություն, որպեսզի բնակիչները ՋՕԸ-երի հետ կապված իրենց մտահոգությունները փոխանցեն ՋՏՊԿ-ին: ՋՕԸ-ների աշխատանքը պետք է վերահսկվի և գնահատվի համապատասխան մարմինների կողմից:
- ✓ Ջրի խնդիրների հանդեպ պետք է լինի ճիշտ, գիտական մոտեցում:
- ✓ Ջրամատակարարման ընկերությունները (Վեոլիա և այլն) պետք է ավելի բարձր պարտավորություններ ունենան՝ բնակչությանը որակյալ ծառայություններ մատուցելու համար, իսկ քաղաքացիները պետք է իմանան ջրօգտագործման վերաբերյալ իրենց իրավունքներն ու պարտականությունները և ՋՕԸ-երից ու ջրամատակարարման ընկերություններից պահանջեն որակյալ ծառայություններ:
- ✓ Ջրօգտագործման համար պետք է պատշաճ մշակույթ ունենալ: Այս ոլորտում անհրաժեշտ է իրականացնել արդյունավետ քաղաքականություն և արդյունավետ կառավարում: Ջրօգտագործողների իրավունքներն ու պարտականությունները պետք է պաշտպանված լինեն, և պետք է լինի պետական մտածելակերպ (նեղ խմբակային/անձնական շահերի փոխարեն):
- ✓ Անկեղծ ասած, չեմ հավատում, որ Հայաստանում հնարավոր է վերականգնել ջրային համակարգը, ներառյալ Սևանա լիճը:
- ✓ Կառավարությունը պատասխանատու է Արարատյան արտեզյան ավազանի ջրային ռեսուրսների (ստորերկրյա և մակերևութային) արդյունավետ կառավարման համար: 2015 թ.-ին Բնապահպանական պետական տեսչության կողմից ձկնաբուծության ոլորտում ստուգումները դադարեցվեցին կառավարության 2015 թ. հուլիսի 30-ի թիվ 839 ա որոշման համաձայն՝ գործարարության զարգացման համար: Այնուամենայնիվ, 2017 թ. սկզբին ԲՆ-ն վերսկսեց ստուգումները, քանի որ բնապահպանական և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման հետ կապված խնդիրներ առաջացան:
- ✓ Մեր կազմակերպությունը (ՄԱԶԾ) խորհուրդ է տալիս՝ 1) օգտագործել առաջադեմ տեխնոլոգիաներ ջրի խնայողության համար, օրինակ, Արարատյան դաշտում ձկնաբուծարանների օգտագործած ջրի (ֆիլտրումից հետո) կիրառում հողերի ոռոգման նպատակով (Հայանիստ համայնքում փորձնական ծրագիր է իրականացվել ԱՄՆ ՄԶԳ ԳՍՏՕ ծրագրի և «Կոկա Կոլա»-ի հետ համատեղ): Սա կարող է երկրում վերարտադրվել, եթե ֆինանսական ռեսուրսներ գտնվեն դրա համար: 2) Դրենաժային համակարգերը պետք է վերականգնվեն: 3) Ջրի կառավարման քաղաքականությունը պետք է վերանայվի: 4) երկրում պետք է իրականացնել տեխնիկատնտեսական հետազոտություններ՝ գնահատելու նախնական վիճակն ու համապատասխան միջոցառումներ պլանավորելու համար: 5) բանկային համակարգը պետք է օժանդակի ձկնաբուծարաններին (մատչելի վարկեր տրամադրելով), որպեսզի նման ջրախնայողական համակարգեր տեղադրվեն:



- ✓ Շատ հաճախ ջրային ռեսուրսների կառավարման համակարգում հստակեցված չեն տարբեր մարմինների կողմից իրականացվելիք գործողությունները, որի արդյունքում հաճախ առաջանում են վեճեր և տարաձայնություններ: Հարկ է հստակեցնել յուրաքանչյուր կառավարման մարմնի գործառնությունները, և պարտադիր վերանայել ջրային ոլորտի գործող օրենսդրական դաշտը: Առանց օրենսդրական դաշտի վերանայման և գործառնությունների հստակեցման խիստ հսկողության սահմանում և պատժամիջոցների կիրառումն, կարծում եմ, կբարդացնի ներկայիս իրավիճակը և առավել խառնիճադանջ կդարձնի ներկայիս ջրային ռեսուրսների կառավարման համակարգը: Անհրաժեշտ է մշակել քայլերի հերթականություն, որոնք կբխեն մեկը մյուսից: Ձեր կողմից թվարկված բոլոր միջոցառումները կբերեն ջրային ռեսուրսների կարավարման արդյունավետության բարձրացման, սակայն անհրաժեշտ է մշակել դրանց կատարման հստակ հերթականություն, հակառակ դեպքում արդյունավետության հասնելու փոխարեն էլ ավելի կվատթարացվի ներկա կառավարման համակարգը:

3. Հարց. Ըստ Ձեզ, որտե՞ք են այսօր Արարատյան դաշտում խմելու և ոռոգման ջրերի հասանելիության ու որակի հետ կապված հիմնական խնդիրները:

Պատասխաններ

- ✓ Խմելու ջրի կոշտությունը: Այդ հարցը կարող է լուծվել աղբյուրները փոխելու միջոցով:
- ✓ Խմելու ջրի որակը չի կարելի համարել <<վատ>> կամ <<անթույլատրելի>>՝ վերջինիս համային առանձնահատկությունների հիման վրա: Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերը ստուգվել են և ընդունելի են համարվում խմելու նպատակով օգտագործելու համար: Այնուամենայնիվ, արտեզյան ջրերի համը զիջում է լեռնային ջրերի որակին (օրինակ՝ Գառնիի), և դրանք զով չեն (մոտավորապես +18 աստիճան են): Արտեզյան ջրերի որակը Արարատյան դաշտում հիմա ավելի ցածր է, քանի որ Արարատյան դաշտի արտեզյան ջրերի մակարդակը նվազել է և տարբեր հորիզոնների ջրերը միախառնվել են:
- ✓ Մենք ջրամատակարարման պատշաճ ենթակառուցվածք չունենք: Ջրի խողովակները հիմնականում հին են, ջրաչափեր չկան ամեն տեղ: Ջրի կորուստները բարձր են:
- ✓ Ջրային ռեսուրսների նկատմամբ հսկողության պակաս կա: Հասարակության կողմից նույնպես պետք է վերահսկողություն իրականացվի այդ ոլորտում:
- ✓ Ջրօգտագործողներին ոռոգման ջրի բաշխման մեջ անարդարություն ու անհավասարություններ կան: Ոռոգման ջրի պակասի պատճառով քաղաքացիները հաճախ արգելափակում են Արմավիրի մարզի մայրուղիները, որպեսզի իրենց ձայնը լսելի լինի:
- ✓ Ջրօգտագործողները ստիպված են վճարել ոռոգման ջրի համար նույնիսկ այն դեպքում, երբ նրանք ջուր չեն ստանում այն ժամանակ, երբ դրա կարիքն ունեն:
- ✓ Թեև կառավարությունը սուբսիդավորում է ՋՕԸ-ներին, վերջիններս արդար և թափանցիկ չեն գործում: Նրանք որոշ դեպքերում ջուր են մատակարարում ջրօգտագործողներին՝ ելնելով վերջիններիս քաղաքական պատկանելությունից կամ իշխանության հետ կապերից, և ՋՕԸ-երը հաճախ մխրճվում են քրեական գործերի մեջ: ՋՕԸ-ները գումար են աշխատում ջրօգտագործողներին ջուր վաճառելով: Նրանց



գործադիր տնօրենը ընտրվում է համայնքի ջրօգտագործողների կողմից և ՋՕԸ-երը ղեկավարվում են ՋՏՊԿ-ի ղեկավարի ներքո միջգերատեսչական խորհրդով, սակայն որևէ մեխանիզմ կամ իրավական հիմքեր չկան վերահսկելու նրանց գործունեությունը որոշակի տարածքում:

- ✓ Արմավիրում խմելու ջրի որակը լավ չէ. կոշտությունը բարձր է և կան համայնքներ (օրինակ՝ Տարոնիկ), որոնք արդեն 25 տարի չունեն խմելու ջուր:
- ✓ Ջրահեռացման համակարգը Հայաստանում շատ թերի է:
- ✓ Թեև շատ ֆերմերներ բողոքում են ոռոգման համար օգտագործվող արտեզյան ջրի որակի մասին, Հայաստանում ոռոգման ջրի որակի ստանդարտներ/նորմեր դեռևս չկան: Շատ վայրերում տնային տնտեսությունների և նույնիսկ արդյունաբերության կեղտաջրերը թափվում են ոռոգման ջրի մեջ:
- ✓ Խմելու ջրի համակարգում խիստ բարձր (80%) կորուստներ կան՝ գողության և որոշ մարդկանց (հատկապես բարձրաստիճան պաշտոնյաների) չվճարելու պատճառով: «Վեոլիա» ընկերությունը գործունեության 10 տարվա ընթացքում չի կարողացել զգալիորեն նվազեցնել ջրի կորուստները (այն կորուստները կրճատել է 89% -ից մինչև 76%, և նախատեսում է հետագայում նվազեցնել ջրային կորուստները 30% -ով մինչև 2032 թ, կամ տարեկան 2% -ով): Այդ կորուստների դիմաց փոխհատուցումը «Վեոլիա»-ն ստանում է՝ ավելացնելով սովորական քաղաքացիների վճարած ջրի սակագները:
- ✓ Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսները նվազել են ջրի անվերահսկելի արդյունահանման շնորհիվ (առանց ջրաչափերի և / կամ առանց թույլտվությունների): Այս խնդիրը ոռոգման ջրի սակավության է բերել, և շատ ֆերմերներ ստիպված են վաճառել իրենց հողերը և հեռանալ երկրից:
- ✓ ՀՀ բնապահպանության նախարարությունը ջրօգտագործման թույլտվությունները տրամադրել է ջրօգտագործողներին 2002 թ.-ից, սակայն կան բազմաթիվ հորեր, որոնք բացվել են մինչև 2002 թվականը, որոնց համար այդպիսի թույլտվություններ չկան:
- ✓ Խմելու ջրի որակը միշտ և ամենուր չի վերահսկվում: Շատ դեպքեր կան, երբ բնակչությունը թունավորվել է (Արգնի-Երևան ջրի խողովակաշարով, Նուբարաշենում, և այլն), պայմանավորված այն հանգամանքով, որ արդյունաբերության ոլորտի կեղտաջրերը երբեմն թափվում են խմելու ջրի մատակարարման համակարգ:
- ✓ Ջրային ռեսուրսների անհավասար բնական բաշխումը (երկրի տարբեր մասերում) խնդիրներ է առաջացնում ջրի հասանելիության հետ: Երկրորդ, պետական ֆինանսավորման պակասը նույնպես նպաստում է երկրի տարբեր մասերի ջրամատակարարման անհավասարություններին: Միակ մասնավոր ընկերության՝ «Վեոլիա»-ի հետ 2017 թ-ին ՀՀ կառավարությունը ստորագրել է 15 տարվա պայմանագիր, որի շրջանակներում խմելու ջրի մատակարարում է իրականացվելու ՀՀ բոլոր մարզերում: Վերջինիս ծածկույթի տարածքում պաշտոնական աղբյուրները գնահատում են 20-23 ժամ/օր ջրամատակարարում, իսկ մնացած բնակավայրերում ջրամատակարարման տևողությունը անկայուն է, հաճախակի ընդհատումներով, և ջրի որակը չի վերահսկվում, և հաճախ այն նորմերից հեռու է:
- ✓ Տեղական համայնքները և համայնքների ղեկավարները հաճախ դեմ են լինում «Վեոլիա»-ի ծառայությանը, քանի որ համապատասխան համայնքի ղեկավարները փող են վաստակում տեղական քաղաքացիներին ջուր վաճառելով: Մյուս կողմից, «Վեոլիա»-ն, որպես բիզնես-ուղղվածություն ունեցող ընկերություն, շահագրգռված չէ ընդլայնել իր կողմից սպասարկվող բնակավայրերի ցանկը ՀՀ ողջ տարածքում, քանի որ երկրում շատ մանր և իրարից հեռու գտնվող գյուղեր կան, որտեղ մեկ անձի հաշվով ներդրումային ծախսերը (նոր ջրագծերի կառուցման համար) մի քանի անգամ



գերազանցում են այդպիսի ծախսերը ավելի խիտ բնակեցված բնակավայրերում, և նրանք այդ վայրերում ավելի փոքր շահույթ են ակնկալում:

- ✓ Արարատյան արտեզյան ավազանի ինքնաշատրվանող զոնան երեք անգամ փոքրացել է (32800 հա-ից մինչև 10700 հա), արտեզյան ջրերի անվերահսկելի արդյունահանման պատճառով (հիմնականում ձկնաբուծության կողմից): Ստորերկրյա ջրերի մակարդակը նվազել է 3-15 մետրով: Արդյունքում, շենքերը ճաքեր են տալիս, ֆերմերները ոռոգման ջուր չեն ստանում, հողը դեգրադացիայի է ենթարկվում, և ֆերմերները չեն կարողանում արդյունավետ գյուղատնտեսություն վարել:
- ✓ ԲՆ- ն չի ներկայացնում արտեզյան ջրերի պաշարների և արդյունահանման վերաբերյալ ճշգրիտ տվյալներ, և արդյունահանման վերաբերյալ շատ տվյալներ թաքցնում են, քանի որ շատ հորեր են պատկանում են ազդեցիկ քաղաքական գործիչներին և օլիգարխներին: Կառավարությունը այդքան էլ չի մտահոգվում բնության պահպանության մասին. նրանք պարզապես մտածում են բիզնեսի մասին: Նրանք ձկնաբուծության ոլորտում արդյունավետ մոնիտորինգ չեն իրականացնում և ապօրինի ձկնաբուծարանները չեն հայտնաբերվում, պատժվում կամ փակվում: Պետական պաշտոնյաները ազնիվ չեն: Նրանցից շատերը սեփական հողատարածքներ և ձկնաբուծարաններ, և նրանք կեղծ տվյալներ են հաղորդում: Փականներ և ջրաչափեր տեղադրված չեն շատ խորքային հորերի վրա:
- ✓ Այն վայրերում, որտեղ չկա խմելու ջրի 24 ժամյա մատակարարում, այնտեղ ջրի աղտոտվելու բարձր ռիսկ կա, քանի որ կոյուղու կամ այլ աղտոտված տարածքներից բակտերիաները կարող են ներթափանցել ջրամատակարարման համակարգ (քայքայված խողովակների միջոցով) երբ համակարգում բացասական ճնշում է առաջանում:
- ✓ Վերջին 10-15 տարիների ընթացքում Հայաստանում ջրային ռեսուրսների անխնա շահագործում է եղել: Կառավարությունը բնապահպանական հանցագործություն է կատարել՝ մեծ քանակությամբ ՋԹ-ներ վաճառելու միջոցով: Արարատյան արտեզյան ջրավազանից ՋԹ-ներով փաստացի շատ ավելի ջուր է արդյունահանվել, քան այդ ավազանի ինքնավերականգնման կարողություններն են: Ես գտնում եմ, որ Արարատյան դաշտում պետք է արգելվի ձկնաբուծությունը: Ձկնաբուծարանների վճարած չնչին հարկերը համեմատելի չեն բնությանը պատճառված վնասների հետ: Ձկնաբուծարանների գործունեությունը հանգեցրել է հողի դեգրադացման, ճահճացման և հողերի աղակալման: Մենք 1,5 տարի առաջ այդ հանցագործությունների մասին հաղորդել ենք, իրավապահ մարմինները այս հայցը ուղարկել են Արարատի մարզի դատարան և մինչ օրս դեռ պատասխան չենք ստացել: Այդ հանցագործությունների համար պատասխանատու պաշտոնյաները դեռևս դատված չեն, և նրանք շարունակում են ղեկավարել այդ ոլորտները: Նրանք նույնիսկ համարձակվում են մասնակցել ջրային խնդիրների մասին քննարկումներին, ներառյալ ԱՄՆ ՄԶԳ-ի քննարկումները: Արարատյան արտեզյան ավազանի հարցը կառավարության օրակարգ մտավ միայն այն ժամանակ, երբ պարզեցին, որ Մեծամորի ատոմակայանի ռեակտորների հովացման համար բավարար ջուր չկա, քանի որ այն նույնպես օգտագործում է ստորերկրյա ջրերը:
- ✓ Մեր տարածաշրջանում (Արարատ) առկա ոռոգման ջրի համակարգը քայքայված է և շատ վայրերում նույնիսկ բացակայում է: Հազարամյակի մարտահրավերների դրամաշնորհի շնորհիվ կառուցվել է 5 կիլոմետր երկարությամբ բետոնե կիսախողովակներով ջրագծեր, սակայն իրական կարիքները շատ ավելի բարձր են: Մենք ունենք սահմանամերձ համայնքներ (Պարույր Սևակ, Երասխ), որտեղ անհրաժեշտ է կառուցել 8-10 կմ երկարությամբ բետոնե կիսախողովակներով ջրագծեր,



ինչը կարող է մեծացնել այդ համայնքներում ոռոգվող տարածքները 350-400 հեկտարով:

- ✓ Ստորերկրյա ջրերի հետ կապված իրավիճակը կրիտիկական է այժմ. Արարատյան դաշտի բնակչության համար խմելու ջրի հիմնական աղբյուրն այդ ջրերն են:
- ✓ Ե՛վ խմելու, և՛ ոռոգման ջրերի հասանելիության հետ կապված հիմնական խնդիրներից են ջրամատակարարման ոչ ճիշտ կազմակերպումը և մեծ ջրակորուստների առկայությունը: Այս երկու խնդիրներն իրար հետ փոխկապակցված են և բխում են մեկը մյուսից: Առկա ջրային պաշարների ճիշտ բաշխման և արդյունավետ ջրօգտագործման կազմակերպման պայմաններում, միգուցե առկա ջրի քանակները լիովին բավարարեն Արարատյան դաշտի համայնքներին: Ինչ վերաբերվում է ջրերի որակին, ապա հիմնական խնդիրներից առաջինն են համարում ազգաբնակչության բնապահպանական մտածելակերպի բացակայությունը: Բնակիչները չեն գիտակցում, որ չի կարելի աղտոտել բնական ջրերը: Մյուս խնդիրներից են ջրահեռացման համակարգերի բացակայությունը, աղբահանության ոչ պատշաճ կազմակերպումը, կլիմայի փոփոխության և մարդու ազդեցության արդյունքում ջրային ռեսուրսների ջրաքիմիական ռեժիմների խախտումը, և այլն:

4. Հարց. Ինչպե՞ս կարող են լուծվել այդ խնդիրները: Ո՞ր կառույցները պետք է առավել ներգրավվեն նշված խնդիրների լուծման մեջ, և ինչպե՞ս:

Պատասխաններ

- ✓ Կոռուպցիայի դեմ պայքարը ամենակարևոր գործունեությունն է, որը պետք է իրականացվի երկրում ջրային խնդիրների լուծման համար: Միջազգային կազմակերպությունները պետք է աջակցեն այս հարցում: Կոռուպցիայի մեջ ներգրավված անձանց նկատմամբ պետք է պատիժներ և խիստ միջոցներ կիրառվեն:
- ✓ Անհրաժեշտ է ջրամատակարարման պատշաճ ենթակառուցվածքներ կառուցել. նոր (պլաստիկ) խողովակներ և ջրաչափեր տեղադրել, նվազեցնել ջրային կորուստները:
- ✓ Այն համայնքներում, որտեղ ջրային օպերատորներ (ինչպիսին է Վեոլիան) չկան, ՏԻՄ-երը պետք է այդ համայնքներում ջրամատակարարման համակարգերը վերանորոգեն, և ֆինանսական միջոցներ հայթայթեն նոր խողովակների և ջրաչափերի տեղադրման համար:
- ✓ Ոռոգման ջրի համար քաղաքացիները պետք է իմանան և պաշտպանեն իրենց իրավունքները և նրանք պետք է պահանջեն ՋՕԸ-երի ներկայացուցիչներին՝ ոռոգման ջուրը արդարացիորեն տրամադրեն իրենց, ըստ սահմանված/թափանցիկ ժամանակացույցի:
- ✓ Բնակիչների իրազեկվածությունը պետք է բարձրացնել ջրային խնդիրների մասին ջուրը խնայելու համար: Սա կարելի է անել ՀԿ-ների և քաղաքացիական ակտիվիստների միջոցով:
- ✓ Պետք է արդյունավետ քաղաքականություն մշակել և իրականացնել ջրային ոլորտում:
- ✓ Հարկավոր են ներդրումներ ջրախնայողական համակարգերի, ինչպիսիք են կաթիլային ոռոգման համակարգերը, կառուցման համար:
- ✓ Հարկավոր է հզորացնել մոնիտորինգի և վերահսկման մեխանիզմները, ներգրավել ՀԿ-ներին և շարքային քաղաքացիներին այդ գործընթացներում:
- ✓ Ջրային ռեսուրսների կառավարման ապակենտրոնացում է պետք:



- ✓ Ջրային խնդիրները լուծելու համար նախ պետք է լինի քաղաքական կամք և թափանցիկություն ջրային ոլորտում: Պետք է նաև բարձրացնել պետական պաշտոնյաների պրոֆեսիոնալիզմը և հաշվետվողականությունը:
- ✓ Պետք է խրախուսել ներդրումները ջրամատակարարման ոլորտում, ներգրավելով տեղական ձեռնարկություններին (օրինակ՝ Գրանդ Քենդի, Վիվասել ՄՏՍ, և այլն) և միջազգային / դոնոր կազմակերպություններին (ԱՄՆ ՄԶԳ, Համաշխարհային բանկ, IFAD և այլն);
- ✓ Պետական-մասնավոր գործընկերությունը (Գրանդ Քենդի, Վիվասել ՄՏՍ, և այլն) և դոնորների / բարեգործական կազմակերպությունների ներգրավումը «Վեոլիա»-ի ծածկույթից դուրս գտնվող տարածքներում անհրաժեշտ է ջրամատակարարման համակարգի վերականգնման և բնակչությանը մատչելի և որակյալ խմելու ջուր ապահովելու համար:
- ✓ Հանրապետությունում հնարավորություն կա Գյումրիից (Ղազանչի աղբյուրից) բարձրորակ խմելու ջուր ապահովելու Արարատյան դաշտի բնակիչներին (1000 լիտր / ժամ թողունակությամբ): Այս ծրագիրը կարժենա մոտ 35-40 մլն դոլար, սակայն ֆինանսավորման աղբյուրներ դեռևս չեն հայտնաբերվել այս նախագծի համար:
- ✓ Բոլոր խոշոր ջրօգտագործողների մոտ պետք է տեղադրվեն ավտոմատացված ջրաչափական-հեռակառավարման համակարգեր, որպեսզի ԲՆ-ն կարողանա կոճակներ սեղմելով վերահսկել ջրի օգտագործման / արդյունահանման ծավալները և համապատասխան ինֆորմացիա ստանա ցանկացած պահին օգտագործվող ջրի քանակի մասին:
- ✓ ԲՆ- ն պետք է լիազորված լինի ջրօգտագործման և արտեզյան ջրի արդյունահանման նկատմամբ պատշաճ վերահսկողություն / մոնիտորինգ իրականացնելու համար: Ջրի ապօրինի օգտագործման համար տույժերի չափը պետք է զգալիորեն բարձրացվի և համարժեք լինի երկրի ջրային ռեսուրսներին պատճառված վնասների չափի հետ:
- ✓ ՀՀ կառավարությունը նախատեսում է ներգրավել լրացուցիչ օպերատոր (ջրամատակարարման մասնավոր կազմակերպություն)՝ ներկայումս Վեոլիա ընկերության կողմից չսպասարկվող բնակավայրերը սպասարկելու համար:
- ✓ Ձկնաբուծարանները պետք է անցնեն ջրօգտագործման կիսափակ համակարգի, այսինքն երբ նրանք պետք է արդյունահանում են ջրի միայն 30%-ը, իսկ մնացածը (70%) ջրջանառության մեջ է դրվում:
- ✓ Ֆերմերները պետք է ստանան համապատասխան վերապատրաստում և խորհրդատվություն՝ ջրի խնայողաբար և առավել արդյունավետ օգտագործման վերաբերյալ: Օրինակ, հաճախակի ոռոգման փոխարեն երբեմն հարկավոր է հողի փխրեցում անել, որը նաև հողը հարստացնում է թթվածնով և բարձրացնում բերքատվությունը:
- ✓ Էլեկտրաէներգիայի բարձր գնի պատճառով խորը ստորերկրյա ջրերի արդյունահանումը թանկ է արժենում, հետևաբար, մենք պետք է պոմպակայանների շահագործման համար օգտագործենք այլընտրանքային էներգիայի աղբյուրներ (օրինակ՝ արևի էներգիան):
- ✓ Ստորերկրյա ջրային ռեսուրսների սանիտարական/ էկոլոգիական թողքերը պետք է կրճատվեն: 2011 թ. ընդունված օրենքը հակաէկոլոգիական է: Այն ընդունվել է՝ ընդլայնելու համար հիդրոէլեկտրակայանների ցանցը, որոնց մի մասը պատկանում են ազդեցիկ անձանց: Հիդրոէլեկտրակայանների գերշահագործումը վտանգում է գետերի ջրավազանները: Թեև ՀԷԿ-երը նպաստում են վերականգնվող էներգիայի արտադրությանը, ԲՆ կողմից համապատասխան ՋԹ-ները տրամադրելիս ջրային ճիշտ



հոսքերի հաշվարկ չի կատարվել (ըստ <<Հայկական բնապահպանական ճակատ>>-ի գնահատումների՝ այդ ՀԷԿ-երի 80% -ը ջրի սխալ տվյալներ են ներկայացնում):

- ✓ Մենք պետք է պայքարենք նաև ոռոգման ջրերի վճարման հետ կապված անարդարության դեմ: Կան մեծ հողատերեր, ովքեր չեն վճարում ոռոգման ջրի համար: Կան բնակավայրեր, որտեղ մինչև ս.թ. հունիսի 6-ը ոռոգման ջուր չի եղել:
- ✓ Ինչ վերաբերում է խմելու ջրի մատակարարմանը, ես չեմ կարծում, որ հարկավոր է ընդլայնել Վեոլիա ընկերության ծածկույթը, որը տեղադրում է ջրաչափեր և բնակիչներին բավականին թանկ գնով վաճառում է խմելու ջուրը (մոտ 200 դրամ խմելու ջրի մեկ խորանարդ մետրի դիմաց): Կարծում եմ, դրա փոխարեն ՏԻՄ-երը պետք է կազմակերպեն իրենց համայնքներում ջրամատակարարման համակարգերի տեղադրումը/վերանորոգումը և նրանք պետք է այնպիսի ջրի սակագին սահմանեն, որը կծածկի միայն ջրամատակարարման համակարգի պահպանման/վերանորոգման աշխատանքների արժեքը: Բնակիչները պետք է ՏԻՄ-երից պահանջեն ջրի հետ կապված եկամուտների և համապատասխան ծախսերի մասին հաշվետվություն տրամադրել խուսափելու համար ՏԻՄ-երի կողմից ջրի վարձավճարների վատնումից կամ չարաշահումից:
- ✓ Ջրային ոլորտում ավելի շատ պրոֆեսիոնալ և սրտացավ դեկավարների կարիք ունենք: Այս ոլորտում անհրաժեշտ են արմատական փոփոխություններ՝ ավելի արդյունավետ կառավարում ունենալու համար: Եթե այս ոլորտում ընդամենը 5-6 սրտացավ, արհեստավարժ անձինք ներգրավվեն վերահսկողության մեջ, նրանք կարող են օգնել լուծելու բազմաթիվ կարևոր խնդիրներ:
- ✓ Լուծումները կարող են լինել տարաբնույթ, կախված կոնկրետ խնդրի տեսակից: Լուծումներից է ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման կազմակերպում, բնապահպանական միջոցառումների կազմակերպում, բնակչության իրազեկման մեծացում, բնապահպանական մտածելակերպի զարգացում, և այլն: Բոլորն կառույցներն (Միջազգային/տեղական կառույցներ, Պետական/մասնավոր հատված, Քաղաքացիական հասարակություն, ՀԿ-ներ, ակտիվիստներ) անխտիր պետք է ներգրավվեն նշված խնդիրների լուծման մեջ: Լուծումների կարելի է հասնել բոլոր թվարկված խմբերի միասնական ջանքերի արդյունքում:

5. *Հարց. Ըստ Ձեզ, ինչպե՞ս կարելի է հասնել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարմանն առնչվող օրենսդրության և քաղաքականության մեջ բարեփոխումների իրականացմանը:*

Պատասխաններ

- ✓ Անհրաժեշտ է քաղաքական կամք և բարեփոխումներ իրականացնելու ցանկություն:
- ✓ Անհրաժեշտ է իրականացնել մոնիտորինգ և համապատասխան հետազոտություններ, և ապա մշակել կառավարման մոդուլներ:
- ✓ Ջրի խնդիրները լուծելու համար պետք է օգտագործվի համակարգային մոտեցում:
- ✓ Պետական մարմինները պետք է ավելի մեծ պատասխանատվություններ կրեն իրենց գործողությունների նկատմամբ:
- ✓ Ջրային ռեսուրսների կառավարման մեջ պետք է պրոֆեսիոնալներին ներգրավել՝ համարժեք աշխատավարձով:



- ✓ Օրենքները / օրենսդրությունը պետք է այնպես մշակվեն, որպեսզի շարքային քաղաքացու իրավունքներն ու շահերը պաշտպանեն և ոչ թե ոմանց անձնական կամ նեղ խմբերի շահերը:
- ✓ Բարեփոխումների իրականացման համար համապատասխան ֆինանսավորում է պետք:
- ✓ Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման իրական բարեփոխումները կարող են իրականացվել միայն այն ժամանակ, երբ լինի ավելի լավ քաղաքական համակարգ: Հակառակ դեպքում, ներկա իրավիճակում հնարավոր չէ որևէ նշանակալի փոփոխության հասնել:
- ✓ Նշված բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ է կազմակերպել քննարկումներ, միջազգային լավագույն փորձի/օրինակների ուսումնասիրություն, ինչպես նաև համայնքներում ջրային ոլորտի խնդիրների վերհանում և ուսումնասիրում:

2.3. Եզրակացություններ և առաջարկություններ

Ջրային ոլորտի մասնագետների և շահագրգիռ կողմերի հետ անցկացված այս որակական հետազոտությունը հաստատեց, որ վերջին 10-15 տարիների ընթացքում Արարատյան դաշտում, և ընդհանուր առմամբ Հայաստանում ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը չի իրականացվել: Դա հանգեցրել է Արարատյան դաշտի արտեզյան ավազանի մակարդակի անկման, հողի դեգրադացման և բնակչության վրա համապատասխան սոցիալ-տնտեսական ազդեցության: Սա հիմնականում պայմանավորված է ձկնարդյունաբերության կողմից արտեզյան ջրային ռեսուրսների անխնա օգտագործմամբ և պետական իշխանությունների կողմից պատշաճ վերահսկողության բացակայությամբ: Ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման և վերահսկման համակարգը կոռումպացվել է, ինչը նպաստել է ձկնարդյունաբերության մեջ անօրինական բիզնեսի ծաղկմանը, որոնց մեծ մասը պատկանում են բարձրաստիճան պետական պաշտոնյաներին և օլիգարխներին:

Շահերի բախման պատճառով համապատասխան մարմինները չեն կարողացել լիովին վերահսկել և արգելել այդ անօրինական բիզնեսը: Քաղաքացիական հասարակությունն էլ պատշաճ կերպով տեղեկացված կամ լիազորված չի եղել՝ պայքարելու համար Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի անօրինական և անխնա օգտագործման հետ կապված այդ բնապահպանական խնդիրների դեմ: Չնայած երկրի ջրային ռեսուրսները հիմնականում բավարար են գյուղատնտեսության կարիքների համար, ոռոգման համակարգը հիմնականում անարդյունավետ է, ջրի կորուստները բավականին բարձր են՝ 40-70 տոկոս, որոնց պատճառը հիմնականում ոռոգման ջրի քայքայված ենթակառուցվածքներն են ու ապօրինի կամ առանց հաշվառման ջրօգտագործումները:



Սա բերում է երկրում ջրային ռեսուրսների անհավասար բաշխման, շատ համայնքների թողնելով առանց ոռոգման ջրի, որը կենսական նշանակություն ունի գյուղական համայնքների գոյատևման ու զարգացման համար:

Նույնը կարելի է ասել նաև խմելու ջրի մասին: Ամենամեծ ջրամատակարարման ընկերությունը՝ «Վեոլիա ջուրը», պետք է բավարարի ամբողջ երկրի բնակչության խմելու ջրի պահանջները, սակայն կան մոտ 560 համայնքներ, որտեղ այդ ընկերությունը ներկա ջրամատակարարում չի իրականացնում: Նույնիսկ «Վեոլիա ջուր» - ի կողմից սպասարկվող համայնքներում ջրի կորուստների չափազանց բարձր են (80-85%), և այդ համայնքների մեծ մասում չկա 24 ժամյա ջրամատակարարում: Ջրի որակը շատ համայնքներում ցածր է և խմելու համար ոչ պիտանի (ըստ համային առանձնահատկությունների), ջրի որակի վերահսկողությունը ներկայումս թերի է կատարվում երկրում՝ առաջ բերելով ռիսկեր երկրի բնակչության առողջության համար:

Այսպիսով, համադրելով Արարատյան դաշտի քաղաքային և գյուղական բնակավայրերի բնակիչների, ինչպես նաև ջրային ոլորտի փորձագետների և շահագրգիռ կողմերի հետ անցկացված հետազոտությունների արդյունքների վերլուծությունները, Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների (ստորերկրյա և մակերևութային) կառավարման բարելավման համար մշակվել են հետևյալ առաջարկությունները.

1. Արարատյան արտեզյան ավազանի ջրային ռեսուրսների պահպանություն

- a. Խմելու և ոռոգման ջրերի համակարգում ջրակորուստները շատ բարձր են Հայաստանում: Չնայած դրանց մի մասը համարվում է «տեխնիկական կորուստներ», կան մեծ թվով մարդիկ, որոնք չունեն ջրաչափեր և/կամ չեն վճարում ջրի համար, ջուրն օգտագործում են ապօրինի, և նույնիսկ իրենց հողակտորներն են ոռոգում խմելու ջրով: Ձկնարդյունաբերությունը Արարատյան դաշտում արտեզյան ջրերի թիվ մեկ սպառողն է և պետական մարմինները մինչ այժմ չեն կարողացել լիովին վերահսկել վերջիններիս կողմից արդյունահանվող ջրերի քանակը, և այդ քանակի համապատասխանությունն ըստ նրանց ունեցած ջրօգտագործման թույլտվության պայմանների: Հաշվի առնելով այն փաստը, որ ձկնարդյունաբերության մեջ հիմնականում գերիշխում են մեծահարուստ իշխանավորներ և օլիգարխներ, որոնք հաճախ պետական մարմինների պատշաճ վերակսկողությունից դուրս են գտնվում, ապա չափազանց կարևոր է, որպեսզի ՀՀ Բնապահպանության նախարարության, ոստիկանության և այլ (ներառյալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների) կառույցների ներգրավմամբ ստեղծվեն վերահսկիչ աշխատանքային խմբեր՝ բոլոր խոշոր ջրօգտագործողների շրջանում պարտադիր ստուգումներ իրականացնելու,



հնարավոր անօրինականությունները (ներառյալ ՋԹ-ների պայմանների խախտումները) հայտնաբերելու և շտկելու համար:

- b. ՀՀ ԲՆ և այլ պետական կառավարման մարմինները պետք է հետևեն, որպեսզի Արարատյան դաշտի բոլոր խոշոր ջրօգտագործողները, ներառյալ ձկնաբուծարանները, ունեն համապատասխան ՋԹ-ներ և ջրի մոնիտորինգի առցանց համակարգեր, և որ նրանց կողմից արդյունահանվող ջրերի ծավալը համապատասխանի այդ ՋԹ-ներում ֆիքսված տեխնիկական պարամետրերին:
- c. Պետք է իրականացվեն շարունակական հետազոտություններ ջրային ռեսուրսների բնագավառում, և պետք է վերանայվի համապատասխան օրենսդրական դաշտը՝ բնապահպանական նորմերին և պահանջներին համապատասխան: Ջրի հետ կապված ենթաօրենսդրական ակտեր պետք է մշակվեն և արդյունավետ կերպով իրականացվեն:
- d. Պետք է արգելվի կամ խիստ սահմանափակվի Արարատյան դաշտում նոր հորատանցքերի հորատումը և նոր ՋԹ-ների տրամադրումը, գույքագրվեն բոլոր գոյություն ունեցող հորերը՝ դրանց տեխնիկական պարամետրերով, ինչպես նաև հայտնաբերվեն և փակվեն բոլոր ապօրինի հորերը:
- e. Պետք է նաև բարձրացվի արտեզյան ջրերի սակագինը՝ կանխելու համար դրանց անխնայ և ոչ արդյունավետ օգտագործումը:
- f. Հաշվի առնելով ջրային խնդիրների վերաբերյալ բնակչության ցածր տեղեկացվածությունը և որոշումների կայացման գործընթացում նրանց մասնակցության ցածր մակարդակը, կարևոր է, որ բնակիչները վերապատրաստվեն, ստանան տեղեկատվություն, աջակցություն և լիազորվեն՝ մասնակցելու համար ջրային ռեսուրսների կառավարման, որոշումների կայացման, և մոնիտորինգի գործընթացներին:

2. Խմելու ջրի որակ և հասանելիություն

- a. Արարատյան դաշտում խմելու ջրի որակի հետ կապված բնակչության զգալի մասի (40-45%) դժգոհությունը հաշվի առնելով, առաջարկվում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեին և ՀՀ կառավարությանը՝ գտնել ֆինանսավորման աղբյուրներ (մոտավոր հաշվարկներով՝ 35-40 մլն ԱՄՆ դոլար) Արարատյան դաշտի բնակչության համար որակյալ խմելու ջուր մատակարարելու համար (ըստ Ջրտնտեսական-ի տվյալների, Գյումրիի Ղազանչի աղբյուրում կան ավելցուկային խմելու ջրի պաշարներ (մոտ 1000



լիտր/վրկ), որը կարելի է նոր խողովակաշարերի տեղադրմամբ հասցնել Արարատյան դաշտի բնակչությանը):

- b. <<Վեոլիա ջուր>> կազմակերպությանը պետք է հանձնարարվի ուսումնասիրել իր սպասարկման տարածքներում խմելու ջրի համակարգում գոյություն ունեցող ահռելի կորուստների պատճառները և անհապաղ միջոցներ ձեռնարկել այդ կորուստների կրճատման համար: Չնայած վերջինիս պայմանագրում ամրագրված է, որ այն պետք է նվազեցի կորուստները տարեկան 2 տոկոսով, մենք դա անընդունելի և շատ ցածր ենք համարում՝ հաշվի առնելով հանրապետությունում, և մասնավորապես Արարատյան դաշտում ստեղծված ներկայիս կրիտիկական իրավիճակը կապված շատ համայնքներում խմելու ջրի ընդհատումներով մատակարարման և խմելու նպատակով ոչ որակյալ ջրի առկայության հետ: Այդ կորուստների կտրուկ նվազեցում կբերի սպասարկվող տարածքներում ջրամատակարարման տևողության երկարացման, <<Վեոլիա ջուր>>-ի կողմից չսպասարկվող տարածքների կրճատման, ինչպես նաև ջրի սակագնի վերանայման (քանի որ այդ մեծ կորուստների պատճառով տուժում են պարտաճանաչ քաղաքացիները, ովքեր ստիպված են լինում ավելի ու ավելի բարձր վճարել իրենց օգտագործած ջրի համար՝ փակելու համար չվճարողների կամ ապօրինի ջրօգտագործողների պատճառած վնասները:)
- c. Ջրային տնտեսության պետական կոմիտեն պետք է հոգ տանի նաև <<Վեոլիա ջուր>> ընկերության ծածկույթից դուրս ներկայումս գտնվող 560 համայնքներին որակյալ և շուրջօրյա խմելու ջուր ապահովելու համար: Պետք է գտնվեն ֆինանսավորման աղբյուրներ նոր ջրագծերի անցկացման համար, հայտնաբերվեն և կրճատվեն ջրակորուստները, տեղադրվեն ջրի հաշվառման համակարգեր, և սահմանվեն բնակչության համար առավել հասանելի սակագներ:
- d. Պետք է խրախուսել ներդրումները ջրամատակարարման ոլորտում, ներգրավելով տեղական ձեռնարկություններին (օրինակ՝ Գրանդ Քենդի, Վիվասել ՄՏՍ, և այլն) և միջազգային/դոնոր կազմակերպություններին (ԱՄՆ ՄԶԳ, Համաշխարհային բանկ, IFAD և այլն), հատկապես «Վեոլիա»-ի ծածկույթից դուրս գտնվող տարածքներում ներդրումների համար՝ ջրամատակարարման համակարգի վերականգնման և բնակչությանը մատչելի և որակյալ խմելու ջուր ապահովելու համար:
- e. ՀՀ Կառավարությունը, ի դեմս ԱՆ Առողջապահական պետական տեսչության, պետք է հանրապետության բոլոր բնակավայրերում



ապահովի բնակչությանը մատակարարվող խմելու ջրի որակի կանոնավոր ստուգումներ անկախ այն հանգամանքից, թե այդ բնակավայրին ջրամատակարարումն իրականացվում է «Վեոլիա ջուր» ընկերության թե՛ ՏԻՄ-երի կողմից:

- f. Բնակիչների իրազեկությունը պետք է բարձրացվի ջրօգտագործողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, որպեսզի նրանք կարողանան պաշտպանել իրենց իրավունքները Վեոլիայի, ՏԻՄ-երի և ջրամատակարարում իրականացնող մյուս կազմակերպությունների հետ առնչվելիս: Բնակիչները պետք է պահանջեն, որ ոռոգման ջուրը արդարացիորեն տրամադրվի իրենց, ըստ սահմանված/թափանցիկ ժամանակացույցի:
- g. Պետք է բարելավել Արարատյան դաշտում ջրահեռացման համակարգերը՝ սանիտարական վիճակի բարելավման նպատակով:

3. Ոռոգման ջրի որակ և հասանելիություն

- a. ՋՕԸ-երի միջոցով ֆերմերներին ոռոգման ջրի բաշխման համակարգը պետք է վերանայվի: ՋՕԸ-երին ոռոգման ջրի համար կանխիկ վճարումները պետք է ամբողջությամբ բացառվեն, խուսափելու համար ՋՕԸ-երի կողմից միջոցների հնարավոր չարաշահումից: Միջոցառումներ պետք է իրականացվեն (օրինակ, ջրի պահանջագրերի ուղարկման և վճարումների առցանց/ինտերնետային հարթակները) ապահովելու ՋՕԸ-երի թափանցիկ և արդար աշխատանքը:
- b. Քաղաքացիների համար պետք է առցանց և թե՛ գծի ծառայություններ մատուցվեն՝ անհրաժեշտության դեպքում ՋՕԸ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների դժգոհություններն ու մտահոգությունները համապատասխան աստիճաններին հասցնելու համար:
- c. ՋՕԸ-երի ղեկավարների ընտրությունները պետք է անցկացվեն ավելի թափանցիկ և մրցակցային կարգով,
- d. Ոռոգման ջրի համար նախատեսված ջրի սակագինը և ֆերմերների կողմից օգտագործվող ոռոգման ջրի ծավալների գնահատման սկզբունքները պետք է վերանայվեն: Մոտավոր գնահատման փոխարեն հարկ է կիրառել ոռոգման ջրի հաշվիչներ, իսկ ոռոգման ջրի սակագինը պետք է իջեցվի և



առավել մատչելի լինի, դրանով իսկ նվազեցնելով գյուղմթերքի ինքնարժեքն ու բարձրացնելով դրանց մրցունակությունն արտաքին շուկաներում:

- e. Քաղաքացիական հասարակության կառույցները պետք է վերահսկեն, որ ազդեցիկ անհատները/ֆերմերները անհամեմատ ավելի մեծ ծավալի ջուր չստանան, քան շարքային ֆերմերները:
- f. Պետական վերահսկող մարմինները քաղաքացիական հասարակության կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ պետք է ներգրավվեն ռոռզման ջրի մեծ կորուստների պատճառների ուսումնասիրման գործընթացում, և պետք է հայտնաբերեն ու կանխեն ապօրինի ջրօգտագործման դեպքերը:
- g. Ռոռզման ջրի սակագնի վերահաշվարկ պետք է իրականացվի, և այնպիսի սակագին սահմանվի, որ այն ծածկի համակարգի պահպանման ծախսերը՝ չնպաստելով ՋՕԸ-երի կամ առանձին անհատների հարստացմանը:
- h. Զրախնայողական տեխնոլոգիաները, ինչպիսիք են կաթիլային ռոռզումը, ակվապոնիկան և հիդրոպոնիկան, պետք է խրախուսվեն, սուբսիդավորվեն (պետության կամ դոնոր կազմակերպությունների կողմից) և հասանելի դառնան ֆերմերներին: Ֆերմերները պետք է ստանան համապատասխան վերապատրաստում և տեխնիկական աջակցություն, որպեսզի կարողանան հիմնել և կիրառել այդպիսի համակարգեր:
- i. Ձկնարդյունաբերության մեջ պետք է խրախուսվեն և սուբսիդավորվեն կիսափակ համակարգով աշխատող (երբ արդյունահանում են ջրի միայն 30%-ը, իսկ մնացածը 70%-ը շրջանառության մեջ է դրվում), ինչպես նաև ջրի երկրորդական օգտագործմամբ՝ ձկնաբուծարանների օգտագործած ջրի ֆիլտրմամբ գյուղատնտեսության համար ռոռզման ջրի մատակարարման տեխնոլոգիաները (ինչպես վերջերս փորձարկվել է ԱՄՆ ՄՁԳ-ի ԳԱՏՕ ծրագրի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի ԳԷՀ ՓԴԾ-ի կողմից Հայանիստ գյուղում): Վերջիններիս համար կարող խթան կարող են հանդիսանալ ջրի իջեցված/ցածր սակագինը, նոր կապիտալ ներդրումները և բանկերի կողմից ցածր տոկոսադրույքով վարկերը:
- j. Պետությունը պետք է նաև միջոցներ գտնի Արարատյան դաշտում, հատկապես ձկնաբուծարանների հարակից տարածքներում դրենաժների կառուցման կամ վերջիններիս վերանորոգման/արդիականացման համար:



- k. Բնակիչների իրազեկությունը պետք է բարձրացվի ջրօգտագործողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, որպեսզի նրանք կարողանան պաշտպանել իրենց իրավունքները ՋՕԸ-երի հետ առնչվելիս:

Գրականության ցանկ

3. Toward integrated water resources management in Armenia, World Bank, 2015
4. Assessment study of groundwater resources of the Ararat Valley, USAID Clean Energy and Water Program, Final Report, 2014



Հավելված 1. Խորին հարգազրույցի մասնակիցների ցանկ

	<i>Գազմակերպություն</i>	<i>Անուն, Ազգանուն</i>	<i>Պաշտոն</i>	<i>Հարցազրույցի օրը</i>
1.	ԱՄՆ ՄԶԳ ԳԱՏՕ	Մադգա Ավետիսյան	Ծրագրի ղեկավար	12.06.2017
2.	<<Էկոլուր>> տեղեկատվական ՀԿ	Ինգա Զարաֆյան	Տնօրեն	12.06.2017
3.	<<Հետք>> առցանց օրաթերթ	Սառա Պետրոսյան	Լրագրող	13.06.2017
4.	<<ՋԻՆՋ>> ինժեներա- խորհրդատվական ընկերություն	Էդուարդ Մեսրոպյան	Տնօրեն	13.06.2017
5.	ԷԵԲՊՆ ՋՐՏնտՊետԿոմ	Հովհաննես Հարությունյան	Նախագահի տեղակալ (խմելու ջրի հարցերով)	14.06.2017
6.	ԷԵԲՊՆ ՋՐՏնտՊետԿոմ	Վոլոդյա Նարիմանյան	Նախագահի տեղակալ (ոռոգմ. ջրի հարցերով)	14.06.2017
7.	ՀՀ ԲՆ ՋՌԿԳ	Արտյոմ Մխիթարյան	Պետի տեղակալ	14.06.2017
8.	<<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> ՀԿ	Ելենա Մանվելյան	Տնօրեն	15.06.2017
9.	Հայջրնախագիծ ինստիտուտ	Յուրի Զավադյան	Տնօրեն	15.06.2017
10.	<<Հայկական բնապահպանական ճակատ>> քաղ. նախաձեռն.	Լևոն Գալստյան	Համակարգող խորհրդի անդամ	16.06.2017
11.	Արարատ ՋՕԸ	Վանյա Թարթիկյան	Տնօրեն	16.06.2017
12.	ՀՀ ԲՆ Բնապահպանական պետական տեսչություն	Հակոբ Գալստյան	Պետ	19.06.2017
13.	<<Հայաստանի ձկնարտադրողների և արտահանողների միություն>> ՀԿ	Արթուր Աթոյան	Ղեկավար	19.06.2017
14.	ՄԱԶԾ ԳԷՀ Փոքր դրամաշնորհային ծրագիր	Հովհաննես Ղազարյան	Ազգային համակարգող	20.06.2017
15.	Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակ	Արուսյակ Ալավերդյան	Ավագ գյուղատնտ. մասնագետ	20.06.2017
16.	<<Ազգային ջրային համագործակցություն>> ՀԿ	Լիանա Մարգարյան	Ազգային փորձագետ	21.06.2017
17.	Եվրասիական զարգացման բանկ	Արմեն Պողոսյան	Ներկայացուցիչ	22.06.2017
18.	Ասիական զարգացման բանկ	Սեգր Լորենց	Փոխտնօրեն, Քաղաքաշինության և զարգացման բաժին	03.07.2017

